# ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ՀԵՏՔԵՐՈՎ. ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԿ-ՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## ԶԵԿՈՒՅՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

10 հոկտեմբերի 2016թ.

*Այս ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատվությունը կրում են բացառապես «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն–Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության կարծիքը:*

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0019, Անտառային 164/1
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն–Հայաստան հիմնադրամ
Երևան 0025, Հայաստան, Ալեք Մանուկյան 1 շ.,
ԵՊՀ գրադարանի մ/շենք, 6-րդ հարկ, 602 սենյակ
Հեռ.՝ (374 10) 57 48 98, 57 48 68
Էլ. Փոստ՝ crrc@crrc.am
Կայքէջ՝ www.crrc.am

## Հապավումներ

| | |
|---|---|
| ԱՄՆ ՄԶԳ | Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն |
| ԲՀԿ | Բարեգործական հասարակական կազմակերպություն |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվամիջոցներ |
| ԹԻՀԿ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |
| ՀաՄաՏեղ | «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՔԱ | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՌԿԿ | Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն |
| ՇՊ | Շահերի պաշտպանություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |

# Բովանդակություն

Հապավումներ ........ 2
Ինչպե՞ս կարդալ զեկույցը........ 5
Համառոտագիր........ 6
Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը........ 13
Բաժին 1. Ջատագովություն և շահագրգիռ կողմերի ներգրավում........ 16
Բաժին 2. Ջատագովության առավել հաջողված դեպքեր ........ 30
Բաժին 3. Հարաբերություններ շահառուների, ՔՀԿ-ների և հանրության հետ ........ 37
Բաժին 4. Հանրային վստահությունը ՀԿ ոլորտի հանդեպ ........ 46
Հավելված 1. Գծապատկերներ և աղյուսակներ........ 51
  Բաժին 1 ........ 51
  Բաժին 2 ........ 58
  Բաժին 3 ........ 60
  Բաժին 4 ........ 61
Հավելված 2. Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների կազմակերպական կարողությունները........ 63
Հավելված 3. Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների հարցման հարցաշար........ 66

## Ինչպե՞ս կարդալ զեկույցը

Զեկույցը բաղկացած է *ամփոփագրից*, *հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը* ներկայացնող ներածությունից, չորս *բաժիններից* և *հավելվածներից*:

Զեկույցի սկզբում զետեղված *ամփոփագիրը* ներկայացնում է հետազոտության արդյունքները՝ կենտրոնանալով ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների առջև ծառացած հիմնական խնդիրների և դրանց հաղթահարման հնարավոր ուղիների վրա: Հետազոտության նպատակի և մեթոդաբանության նկարագրությանը հաջորդում է զեկույցի *առաջին* բաժինը՝ նվիրված ուսումնասիրված ՀԿ-ների կողմից իրականացվող ջատագովության նախաձեռնությունների բնույթին, ինչպես նաև այդ նախաձեռնություններում տարբեր շահագրգիռ կողմերի (օրինակ՝ շահառուների կամ պետական մարմինների) ներգրավմանը: *Երկրորդ* բաժինը բացահայտում է նույն ՀԿ-ների կողմից երբևէ իրականացված ջատագովության առավել հաջողված/արդյունավետ նախաձեռնությունները և դրանց հիմքում ընկած գործոնները: *Երրորդ* բաժինն անդրադառնում է շահագրգիռ կողմերի հետ խնդրո առարկա ՀԿ-ների հարաբերությունների այլ (ջատագովությանն անմիջապես չառնչվող) ասպեկտներին, օրինակ՝ ՀԿ-ների կողմից շահառուների ներգրավմանը կազմակերպությունների կառավարման գործընթացներին կամ ՀԿ-ների հանրային հաշվետվողականության մեխանիզմներին: Վերջապես, զեկույցի *չորրորդ* բաժինը բացահայտում է ՀՀ քաղաքացիների՝ ՀԿ ոլորտի նկատմամբ վստահության ցածր ցուցանիշները և մատնանշում այդ ցածր ցուցանիշների հնարավոր պատճառները:

Բաժիններում ներկայացվող տեքստը լրացված է գծապատկերներով, աղյուսակներով և շրջանակված պատմություններով: Դրանցից առանցքային նշանակություն ունեցողները զետեղված են բուն շարադրանքում, իսկ մյուսները *Հավելված 1*-ում՝ ըստ բաժինների: Զեկույցի *Հավելված 2-ը* ներկայացնում է ուսումնասիրված ՀԿ-ների կազմակերպական կարողություններին (աշխատակազմ, բյուջե և այլն) վերաբերող գծապատկերները, որոնք ընդհանուր տեղեկություններ են տալիս խնդրո առարկա կազմակերպությունների մասին: *Հավելված 3*-ը ներկայացնում է ՀԿ-ների պատասխանատուների հարցման հարցաշարը:

Զեկույցի առաջին երեք բաժիններին վերաբերող բոլոր գծապատկերներում ներկայացված արդյունքները հարցմանը մասնակցած ՀԿ-ների թվային (ոչ տոկոսային) տվյալներն են: *Հավելված 2*-ում զետեղված գծապատկերները ևս թվային տվյալներ են արտահայտում: Զեկույցի միայն վերջին (*չորրորդ*) բաժնին վերաբերող գծապատկերներն են, որ տոկոսային տվյալներ են արտահայտում:

## Համառոտագիր

ՅՌԿԿ-Հայաստան հիմնադրամը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) ՀԿ-ի հետ համատեղ, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, 2015-2016թթ. ընթացքում իրականացրել է «Լավագույն փորձի հետքերով. ջատագովությամբ զբաղվող հայաստանյան ՔՀԿ-ների ուսումնասիրություն» խորագրով նախնական (պանելային) հետազոտությունը: Վերջինս նպատակ է հետապնդել բացահայտել **ջատագովության/շահերի պաշտպանության** շեշտադրմամբ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կարիքները, ինչպես նաև գնահատել այդ կազմակերպությունների՝ հանրությանը իրազեկելու և հանրային քաղաքականությունների վրա ազդելու ներուժը:

Հետազոտության համար օգտագործվել է քանակական և որակական գործիքակազմ: Քանակական հետազոտությունն իրականացվել է ջատագովությամբ զբաղվող քառասուն հասարակական կազմակերպությունների (ՀԿ) պատասխանատուների շրջանում՝ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Օգտագործվել է ստանդարտացված հարցաթերթ: Քանակական հետազոտության արդյունքները ստուգելու, համակողմանիորեն հասկանալու, ինչպես նաև շահագրգիռ կողմերի համար առաջարկներ ձևակերպելու նպատակով իրականացվել է որակական հետազոտություն: Վերջինիս շրջանակներում, խորին հարցազրույցների միջոցով հարցվել են ջատագովությամբ զբաղվող տաս ՀԿ-ների, վեց պետական հաստատության, ինչպես նաև երեք լրատվամիջոցի ներկայացուցիչ: Վերոնշյալ տաս կազմակերպությունների շահառուների հետ անցկացվել է հինգ ֆոկուս-խումբ քննարկում: Մեկական կլոր-սեղան քննարկում է անցկացվել քաղաքացիական ակտիվիստների, ՔՀԿ փորձագետների և դոնոր համայնքի ներկայացուցիչների հետ: Հետազոտության արդյունքների նախնական ամփոփումից հետո, անցկացվել է ևս մեկ քննարկում (“world café” ձևաչափով) ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում 2015թ. ՀՀ ողջ տարածքով իրականացված ներկայացուցչական հարցման (N=1443) արդյունքների մի մասը: Վերջիններս, մասնավորապես, համապատասխանում են ԹԻՀԿ-ի առաջադրած հարցափնջին և առնչվում են ՀԿ ոլորտի հանդեպ ՀՀ քաղաքացիների վերաբերմունքին:

Համառոտագիրը ներկայացնում է հետազոտության արդյունքում բացահայտված՝ ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների առջև ծառացած հիմնական մարտահրավերները՝ մի շարք լուծումներ առաջարկելով դրանց հաղթահարման ուղղությամբ:

## *Հարաբերություններ պետական մարմինների հետ*

### Մարտահրավերներ

- Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների մոտ մեկ երրորդը պետական մարմինների հետ իրենց հարաբերությունները որակում է որպես **դիմակայություն:** Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքով, նույնիսկ համագործակցային հարաբերությունների դեպքում ՀԿ-ների ազդեցությունը պետական կառավարման մարմինների վրա իրականում **թույլ** է:

- Պետական մարմինների ներկայացուցիչների կարծիքով, իրենց հետ համագործակցության ձգտող ՀԿ-ները հաճախ **գաղափարական սկզբունքայնության** և **մասնագիտական փորձառության** պակաս ունեն:

### Առաջարկներ

- Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ կշահի, եթե այդ կազմակերպությունները նշված մարմինների հետ իրենց հարաբերություններում **նախաձեռնողականություն** ցուցաբերեն: Մասնավորապես, ՀԿ-ները կարող են պետական մարմինների որոշում կայացնողներին հրավիրել ՀԿ-ների խորհրդի նիստերին և ընդհանուր ժողովներին, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել պետական մարմինների կողմից կազմակերպվող քննարկումներին (օրինակ՝ Ազգային ժողովում օրենքների քննարկումներին կամ ավագանու նիստերին):

- Համագործակցությունը պետական մարմինների և ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների միջև նոր խթան կստանա, եթե վերջիններս ջանքեր գործադրեն պետական մարմիններում **համախոհներ և գործընկերներ գտնելու** ուղղությամբ: Մասնավորապես, ՀԿ-ները կարող են իրենց «ցանցն ավելի ընդարձակ նետել»՝ կապեր և համագործակցություն հաստատելով պետական մարմինների ոչ միայն բարձրաստիճան, այլև **միջին օղակի** պաշտոնյաների հետ:

- Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ները կկարողանան փոխըմբռնման մթնոլորտ ձևավորել պետական մարմինների հետ, եթե նախապես փորձեն հասկանալ պետական մարմինների **ինստիտուցիոնալ շահերը**: Մասնավորապես, անհրաժեշտ է, որ պետական մարմիններին որևէ խնդրի շուրջ համագործակցության հայտ ներկայացնելուց առաջ ՀԿ-ները մանրակրկիտ ուսումնասիրեն պետական մարմինների կարիքները, ձգտումները, շահերը, ինչպես նաև տվյալ խնդրի վերաբերյալ պետական մարմինների կողմից արդեն իրականացված նախաձեռնությունները:

- Պետական մարմինների հետ փոխըմբռնման մթնոլորտի ձևավորմանը կարող է նպաստել ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների **իմիջի բարելավումը**: Անհրաժեշտ է, որ ՀԿ-ները միշտ գործեն սեփական կազմակերպությունների **առաքելությանը համաձայն**, լինեն **արհեստավարժ**, այն է՝ լիարժեքորեն վերլուծեն խնդիրների էությունը և ուսումնասիրությունների և փաստերի վրա հիմնված գրագետ լուծումներ

առաջարկեն: ՀԿ-ները պետական մարմինների հետ իրենց հարաբերություններում առավել ազդեցիկ կլինեն, եթե հանդես գան **կոալիցիոն** խմբերով:

- Պետական մարմինների հետ փոխըմբռնման մթնոլորտի ձևավորման համար անհրաժեշտ է նաև, որ ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ները բարձրացնեն պետական մարմինների հետ իրենց **հաղորդակցության** արդյունավետությունը: Անհրաժեշտ է, որ ՀԿ-ներն իրենց առաջարկությունները և խնդիրները ներկայացնեն պետական մարմինների **կոնկրետ հասցեատերերին՝ հնարավորինս դյուրըմբռնելի ձևաչափերով**: Համագործակցության համար կարևոր է նաև, որ ՀԿ-ները պահպանեն **հետադարձ կապը** պետական մարմինների հետ և վերջիններիս տեղյակ պահեն համագործակցության արդյունքների մասին՝ շեշտադրելով ձեռքբերումները:

## *Հարաբերություններ այլ ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հետ*

### Մարտահրավերներ

- Ջատագովության իրենց նախաձեռնություններում ՀԿ-ների մոտ **մեկ քառորդն է միայն համագործակցում այլ ՔՀԿ-ների հետ**: Այլ ՔՀԿ-ների կարողությունները չօգտագործող ՀԿ-ները մեծ հնարավորություններ են բաց թողնում՝ տեղեկատվության, կապերի, նյութական ռեսուրսների և փորձառության հավելյալ աղբյուրների ձեռքբերման առումով: Միաժամանակ, ջատագովության առավել հաջողված օրինակները նկարագրելիս ՀԿ պատասխանատուների մեծ մասը նշում է դրանցում **կոալիցիաների** խաղացած կարևոր դերը:

- **Մարզային ՀԿ-ները դժվարանում են ԶԼՄ-ների ուշադրությունը հրավիրել** ջատագովության իրենց նախաձեռնությունների վրա: Հանրապետական լրատվամիջոցներն ավելի շատ հետաքրքրված են երևանյան ՀԿ-ների գործունեությամբ, իսկ մարզերում գործող տեղական լրատվամիջոցները մարզային ՀԿ-ների նախաձեռնությունները պատրաստ են լուսաբանել վճարի դիմաց:

### Առաջարկներ

- Ջատագովության նախաձեռնությունների ազդեցությունը զգալիորեն կմեծանա, եթե ՀԿ-ները **համագործակցեն** միմյանց հետ: Համագործակցության անհրաժեշտ պայմաններից մեկը իրազեկվածությունն է դաշտում գործող մյուս կազմակերպությունների վերաբերյալ: Այս իմաստով չափազանց օգտակար կարող է լինել ՀԿ-ների **միասնական պլատֆորմների** ստեղծումը և ՀԿ-ների **«expo-ցուցահանդեսների»** կազմակերպումը, որոնց միջոցով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կկարողանան ծանոթանալ միմյանց հետ և փոխանակել անհրաժեշտ տեղեկատվությունն ու ռեսուրսները:

- Ջատագովության նախաձեռնությունների ազդեցությունը մեծացնելու համար չափազանց կարևոր է, որ ՀԿ-ներն ավելի հաճախ հանդես գան **կոալիցիաներով**: Ընդ որում, կոալիցիաների աշխատանքն ավելի արդյունավետ կդառնա, եթե մասնակից

ՀԿ-ները նախապես սահմանեն միմյանց **պարտականությունները և լիազորությունները**, ինչպես նաև կոալիցիաների ներսում **հաշվետվողականության մեխանիզմներ** ստեղծեն:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոալիցիաների միջոցով իրականացված ջատագովության նախաձեռնություններն ավելի ազդեցիկ են՝ անհրաժեշտ է, որ **դոնոր կազմակերպություններն** ավելի հաճախ ֆինանսավորեն **կոալիցիոն նախագծերը**՝ միաժամանակ քաջալերելով համագործակցությունը փորձառու և նորաստեղծ ՀԿ-ների միջև:

- Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների համար չափազանց կարևոր է **ԶԼՄ-ների** ուշադրությունը: Վերջիններիս հետ համագործակցությունն արդյունավետ դարձնելու նպատակով, և՛ մարզային և՛ երևանյան ՀԿ-ները պետք է մի շարք փոփոխություններ կատարեն իրենց աշխատանքում: Մասնավորապես, ԶԼՄ-ներն ավելի մեծ ուշադրություն կդարձնեն ջատագովության նախաձեռնություններին, եթե վերջիններիս հեղինակները արժեքավոր և ընկալելի **«սենսացիայի»** բաղադրիչ ներմուծեն դրանց մեջ: ԶԼՄ-ների հետաքրքրությունը ջատագովության նախաձեռնությունների հանդեպ կաճի, եթե ՀԿ- ները իրականացված նախաձեռնությունների և **հաջողված պատմությունների համառոտագրեր**, ինչպես նաև որակյալ և մատչելի **մամլո հաղորդագրություններ** տրամադրեն: Անհրաժեշտության դեպքում ՀԿ-ները պետք է **«կրթեն»** ԶԼՄ-ներին որևէ կոնկրետ խնդրի վերաբերյալ՝ վերջիններիս դարձնելով իրենց համախոհը: Համագործակցության չափազանց գործուն միջոց է նաև **ԶԼՄ-ների ընդգրկումը կոալիցիաների** մեջ:

- ԶԼՄ-ների ուշադրությանն արժանանալու համար անհրաժեշտ է, որ ջատագովությամբ զբաղվող **մարզային ՀԿ-ները համագործակցության եզրեր գտնեն** քաղաքացիական հասարակության ոլորտի այլ կազմակերպությունների հետ և **համատեղ օգտագործեն** վերջիններիս՝ տեղեկատվության տարածման ռեսուրսները: Մարզային ՀԿ-ներն իրենց ջատագովության նախաձեռնությունների **բյուջեները պլանավորելիս** պետք է միջոցներ նախատեսեն տեղական ԶԼՄ-ների օգնությամբ հանրայնացման վճարովի աշխատանքներն ապահովելու համար:

## *Հարաբերություններ շահառուների և հանրության հետ*

### Մարտահրավերներ

- Ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների քառորդն է միայն, որ իր ռազմավարական ծրագրերը մշակելիս **օգտագործում** է **շահառուների գաղափարները**: Վերջիններս, իրենց հերթին, **թերահավատ** են այդ գործընթացին նպաստ բերելու սեփական կարողությունների հանդեպ:

- Ուսումնասիրված ՀԿ-ներից կեսում **շահառուները չեն մասնակցում** կազմակերպությունների գործունեության **գնահատման աշխատանքներին**:

Շահառուների մի մասը վստահ չէ նաև, որ կարող է նպաստ բերել ՀԿ-ների գործունեության վերահսկման և գնահատման աշխատանքներում:

- Պետական մարմինների և ՏԻՄ-երի քաղաքականությունների մոնիտորինգ իրականացնող ՀԿ-ների կեսի դեպքում **շահառուները, կամավորները և անդամները չեն մասնակցում այդ մոնիտորինգին**:

- Ուսումնասիրված ՀԿ-ների **կեսից քիչն** է մշտապես հրապարակում իր ծրագրային **հաշվետվությունները**: **ՀԿ-ների մեկ քառորդն** է միայն, որ մշտապես հրապարակում է իր **ֆինանսական հաշվետվությունները**:

## Առաջարկներ

- Զատագովությամբ զբաղվող ՀԿ-ների համար չափազանց կարևոր է շահառուների (ինչպես նաև այլ քաղաքացիների) մասնակցությունը կազմակերպության գործունեության տարբեր ոլորտներում: Այդ մասնակցությունը կաճի, եթե ՀԿ-ներն ավելի արդյունավետ հաղորդակցվեն և շահառուների աչքերում **հասկանալի և գրավիչ** դառնան: Մասնավորապես, անհրաժեշտ է, որ ՀԿ-ները **թիրախավորված մոտեցում** ցուցաբերեն շահառու խմբերի նկատմամբ և յուրաքանչյուր խմբի համար **մատչելի** եղանակով ներկայացնեն իրենց գործունեությունը և ծրագրերը: Շահառուների համար գրավիչ դառնալու համար պակաս կարևոր չէ նաև ՀԿ-ների կողմից ջատագովության իրենց լավագույն **ձեռքբերումների «գովազդումը»**: Շահառուներին տեսանելի դառնալու համար ՀԿ-ները պետք է օգտագործեն հաղորդակցության բոլոր միջոցները, այդ թվում՝ **անմիջական հանդիպումները, բաց քննարկումները, հեռուստատեսային հաղորդումները, ինչպես նաև հրապարակային միջոցառումները (օրինակ՝ ֆլեշմոբերը)**:

- Շահառուների մասնակցությունը ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ների գործունեությանն ակտիվացնելու համար ՀԿ-ները պետք է նաև **մոտիվացնեն** նրանց: Մասնավորապես, անհրաժեշտ է, որ ՀԿ-ները քայլեր ձեռնարկեն շահառուների շրջանում **սեփական կարողությունների նկատմամբ թերահավատությունը փարատելու** ուղղությամբ, շահառուներին ցույց տան, թե որքան կարևոր է նրանց մասնակցությունը այս կամ այն խնդրի լուծման գործում և տարբեր եղանակներով (օրինակ՝ շնորհակալագրերով) հավաստեն այդ կարևորությունը: Անհրաժեշտ է նաև շահառուներին ցույց տալ, թե նրանք ինչ օգուտ կքաղեն այդ մասնակցությունից: ՀԿ-ները կարող են նաև **հզորացնել շահառուների կարողությունները**՝ նրանց համար տարբեր դասընթացներ կազմակերպելու միջոցով:

- Զատագովությամբ զբաղվող ՀԿ-ները կշահեն, եթե **ավելի շատ վստահեն շահառուներին** և ներգրավեն նրանց: Մասնավորապես, ՀԿ-ները շահառուների միջոցով կարող են **բացահայտել ոչ միայն խնդիրները, այլև այդ խնդիրները լուծելու եղանակները**: Անհրաժեշտ է, որ ՀԿ-ները շահառուներին ներառեն տարբեր աշխատանքային խմբերում, ջատագովության միջոցառումներում, ինչպես նաև

սեփական կազմակերպությունների գործունեությունը վերահսկող և գնահատող մեխանիզմներում:

- Հանրային **վստահություն** ձեռք բերելու համար ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ները պետք է քայլեր ձեռնարկեն սեփական **հաշվետվողականությունը** բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես, ՀԿ-ները պետք է ապահովեն իրենց գործունեության հաշվետվողականությունը պարբերական քննարկումների, զեկուցումների, հրապարակումների կամ թերթոնների միջոցով: Չափազանց կարևոր են նաև ՀԿ-ների կողմից իրենց **ֆինանսական հոսքերի վերաբերյալ կանոնավոր հրապարակումները:**

## *Հանրային վերաբերմունք ՀԿ ոլորտի հանդեպ*

### Մարտահրավերներ

- Ընտրանքային հարցման մասնակիցների (1443) ընդամենը **չորս տոկոսն** է հայաստանյան ՀԿ-ների **հաշվետվողականության** մակարդակը բարձր գնահատել: ՀԿ-ների աշխատանքի **թափանցիկությունը** բարձր գնահատողները կազմել են ընդամենը **յոթ տոկոս**:

- Հայաստանի բնակչության ընդհանուր **վստահությունը** ՀԿ ոլորտի հանդեպ **ցածր է.** հարցվածների ընդամենը **յոթ տոկոսն** է վստահում հայաստանյան ՀԿ-ների ներկայացուցիչներին:

### Առաջարկներ

- ՀԿ-ների հանդեպ հանրային համակրանքը շահելու համար շահագրգիռ կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն հանրության շրջանում ՀԿ-ների վերաբերյալ **իրազեկությունը** բարձրացնելու ուղղությամբ: Այս իմաստով մեծ անելիքներ ունեն հենց իրենք ՀԿ-ները: Վերջիններս, մասնավորապես, պետք է ավելի ակտիվ ջանքեր գործադրեն սեփական գործունեության, ծրագրերի և լավագույն ձեռքբերումների մասին տեղեկատվություն տարածելու ուղղությամբ: Անհրաժեշտ է, որ ՀԿ-ները հանրության ընկալումներում ձեռք բերեն **ազնիվ, սկզբունքային, հանրային շահով մտահոգված, հաշվետու** և **արհեստավարժ** կազմակերպության համբավ:

- Սեփական գործունեության մասին տեղեկատվությունը տարածելիս անհրաժեշտ է, որ ՀԿ-ներն օգտագործեն **տեղեկատվական տարբեր հարթակներ**: Օրինակ՝ նրանք դա կարող են անել մարդկանց հետ անմիջական շփումների, հանրային PR արշավների, ՀԿ-ների լավագույն փորձի մասին պատմությունները բերնեբերան տարածելու, ինչպես նաև մարզային և հանրապետական ԶԼՄ-ների միջոցով: Իրենց լսարանն ընդլայնելու նպատակով ՀԿ-ները պետք է **չսահմանափակվեն համացանցով** և միջոցներ ձեռնարկեն **նաև հեռուստաեթեր** մուտք գործելու ուղղությամբ:

- **Հանրային վստահություն** ձեռք բերելու համար հայաստանյան ՀԿ-ները պետք է քայլեր ձեռնարկեն նաև սեփական **հաշվետվողականությունը** բարձրացնելու ուղղությամբ: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես ծրագրային, այնպես էլ ֆինանսական հաշվետվությունները կանոնավոր և տարբեր ձևաչափերով հանրայնացնելու անհրաժեշտությանը:

- Հայաստանյան ՀԿ-ների համբավը կաճի, եթե նրանք **միասնական ջանքերով համարժեք պատասխան տան** իրենց դեմ ժամանակ առ ժամանակ իրականացվող **բացասական քարոզին**, որը հիմնականում պտտվում է «գրանտակերության» և արտաքին դոնորների օրակարգերը սպասարկելու թեմաների շուրջ: ՀԿ-ները պետք է կարողանան ներկայացնել իրենց աշխատանքը և ձեռքբերումները, որոնք արտացոլում են շահառուների կարիքները և **ծառայում են իրենց շահառուների շահերին՝ անկախ ֆինանսավորման աղբյուրներից:**

# Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը

## *Հետազոտության նպատակը*

ՅՌԿԿ-Հայաստան հիմնադրամը Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՅԿ) հետ համատեղ ձեռնամուխ են եղել «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» խորագրով նախնական (պանելային) հետազոտությանը: Վերջինիս խնդիրը շահերի պաշտպանության/ջատագովության շեշտադրմամբ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՅԿ) կարիքների և այդ կազմակերպությունների՝ հանրությանը իրազեկելու և հանրային քաղաքականությունների վրա ներազդելու կարողությունների բացահայտումն է: Լայն իմաստով, ծրագրի նպատակը Յայաստանում ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման խթանումն է:

Նեղ իմաստով, հետազոտության նպատակն է քանակական և որակական գործիքակազմի միջոցով չափել ջատագովությամբ/շահերի պաշտպանությամբ (ՇՊ) զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները, մասնավորապես՝ ստանալ քաղաքականություն մշակելիս քաղաքացիներին ներգրավելու, նրանց շահերը շեշտադրելու և պետական կառույցները մշտադիտարկելու ունակությունների լայն պատկերը: Այս մոտեցումը թույլ կտա քարտեզագրել այն խնդիրներն ու մարտահրավերները, որոնց վերաբերյալ առաջարկությունները կծառայեն որպես իրավիճակի շտկման ուղեցույց:

## *Հետազոտության մեթոդաբանությունը*

Յետազոտությունը ներառում է երկու՝ քանակական և որակական բաղադրիչ, որոնցից առաջինը ջատագովությամբ զբաղվող հայաստանյան ՔՅԿ-ների պատասխանատուների քանակական հարցումն է, իսկ երկրորդը՝ ՔՅԿ-ների պատասխանատուների և այլ դերակատարների կարծիքների խորին հետազոտությունը:

*Քանակական հետազոտության* գլխավոր գործիքը ջատագովությամբ զբաղվող հայաստանյան առավել ակտիվ 40 ՔՅԿ պատասխանատուների (օրինակ՝ նախագահ, գործադիր տնօրեն կամ ծրագրերի համակարգող) հարցումն է եղել[1]: Վերջինս

---

[1] Նշված կազմակերպությունների ընտրության համար հիմք են ծառայել ՔՅԿ-ների մի քանի ցանկ, որոնցից առաջինն ընդգրկել է ԹԻՅԿ «Յայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները եվ ռիսկերը» ուսումնասիրությանը (2011թ.) մասնակցած ՅԿ-ները, երկրորդը՝ ՅՌԿԿ-Յայաստանի՝ ՅԿ ԴԵՊՈ ծրագրի շրջանակներում իրականացված ՔՅԿ ոլորտի շուկայի ուսումնասիրության (2015թ.) մեջ ներառված ՅԿ-ները: Երրորդ ցանկն ընդգկել է հանրային քաղաքականության նախագծերի իրականացման համար Բաց հասարակության հիմնադրամներ-Յայաստան կազմակերպության կողմից աջակցություն ստացած ՅԿ-ները:

իրականացվել է դեմ առ դեմ հարցազրույցի միջոցով՝ ստանդարտացված հարցաթերթի օգնությամբ (տես *Հավելված 3*)։ Հարցաթերթն ընդգրկել է հետևյալ հարցախմբերը.

- ինչպե՞ս են ՔՀԿ-ները կառուցում իրենց հարաբերությունները պետական հաստատությունների, այլ ՔՀԿ-ների և զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) հետ,
- ի՞նչ մոտեցումներ են կիրառվում ծրագրային պլանավորման, մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև տվյալների հավաքագրման և վերլուծության համար,
- ի՞նչ մոտեցումներ են կիրառվում ՇՊ քարոզարշավների ընթացքում,
- ի՞նչ մեխանիզմներով են ՔՀԿ-ներն ապահովում իրենց թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- ինչպես են ՔՀԿ-ները բացահայտում, վերլուծում և պաշտպանում քաղաքացիների իրավունքները և առաջ մղում ՇՊ քարոզարշավների առաջնայնությունները։

Հարցման ընթացքում մասնակիցների պատասխաններն անմիջապես մուտքագրվել են թաբլեթների մեջ։ Հարցման տվյալները մշակվել են SPSS վիճակագրական փաթեթի միջոցով։

*Որակական հետազոտությունն* ընդգրկել է խորին հարցազրույցներ (19), ինչպես նաև ֆոկուսխմբային (5) և կլոր-սեղան (4) քննարկումներ։ Որակական հետազոտությունն իրականացվել է կիսաստանդարտացված ուղեցույցներով՝ հարցվողների յուրաքանչյուր խմբի համար հատուկ մշակված հարցախմբերով։

Խորին հարցազրույցի ուղեցույցներով հարցվել է ջատագովությամբ զբաղվող տաս ՔՀԿ, քաղաքականություն մշակող պետական հաստատությունների (Կառավարություն և Ազգային ժողով) վեց և ԶԼՄ-ների երեք ներկայացուցիչ։ Խորին հարցազրույցների մասնակիցներն ընտրվել են ոլորտի ամենաակտիվ և քաղաքականությունների վրա ազդեցություն ունեցող հաստատությունների շրջանակից։ Հարցազրույցների միջոցով բացահայտվել են Հայաստանում արդյունավետ կառավարման և հանրային ծառայությունների բարելավման նպատակով ՔՀԿ-ների ջատագովության կարողություններն ուժեղացնելու ուղիները։

Դիտարկվող խնդիրները համակողմանի ուսումնասիրելու նպատակով վերոնշյալ տաս կազմակերպությունների շահառուների հետ անցկացված ֆոկուս-խումբ քննարկումները բացահայտել են շահառուների տեսակետներն ու ընկալումները ՇՊ զբաղվող ՔՀԿ-ների գործունեության վերաբերյալ և հավաքագրել առաջարկություններ՝ ուղղված ոլորտի և կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը։

Կլոր-սեղան քննարկումներից երեքն անց են կացվել քաղաքացիական ակտիվիստների, ՔՅԿ փորձագետների և դոնոր համայնքի ներկայացուցիչների հետ: Քննարկումների նպատակներից մեկն էր պարզել ՔՅԿ-ների և նշված երեք խմբերի միջև համագործակցության ներկայիս իրավիճակը, ինչպես նաև ապագա համագործակցության հնարավորությունները: Չորրորդ քննարկումը (world café ձևաչափով) տեղի է ունեցել հետազոտության ընդհանուր արդյունքների նախնական ամփոփումից հետո՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս քննարկման ընթացքում ուղիներ են առաջարկվել ջատագովությամբ զբաղվող ՔՅԿ-ների առջև ծառացած խնդիրները հաղթահարելու վերաբերյալ:

*Որպես լրացուցիչ աղբյուր*, սույն Զեկույցի բաժիններից մեկի («Յանրային վերաբերմունք ՅԿ ոլորտի հանդեպ») համար օգտագործվել է 2015թ. հուլիսին «ՅաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում Յայաստանում իրականացված համապետական հարցման (N=1443) արդյունքների մի մասը: Վերջիններս, մասնավորապես, համապատասխանում են ԹԻՅԿ-ի առաջադրած հարցափնջին և առնչվում են ՅԿ ոլորտի հանդեպ ՅՅ քաղաքացիների վերաբերմունքին[2]:

[2] Յարցման նպատակների և մեթոդաբանության համար, տե՛ս՝ Յետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Յայաստան. *Բարեփոխումների երկար ճանապարհին. ՅՅ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով*. Զեկույց. Երևան 2015:

## Բաժին 1. Ջատագովություն և շահագրգիռ կողմերի ներգրավում

Սույն բաժինը փորձում է պարզաբանել, թե կոնկրետ ի՞նչ գործողություններ են իրականացնում հարցման մասնակից ՅԿ-ները ջատագովության իրենց նախաձեռնություններում և ինչպե՞ս են նրանք այդ նախաձեռնություններում ներգրավում տարբեր շահագրգիռ կողմերին: Ենթաբաժիններից մեկը, օրինակ, նվիրված է այն հարցին, թե ինչպես են ՅԿ-ները շահառուներին ներգրավում ջատագովության իրենց միջոցառումներում, մյուսը՝ ինչպես են ՅԿ-ները հետազոտում պետական մարմինների քաղաքականությունները և ինչպես են փորձում համագործակցել այդ մարմինների ներկայացուցիչների հետ: Բաժինն անդրադառնում է նաև ուսումնասիրված ՅԿ-ների համագործակցությանը այլ ՔՅԿ-ների և լրատվամիջոցների հետ:

### *ՇՊ նախաձեռնությունների ընդհանուր բնութագիրը*

Հարցմանը մասնակցած կազմակերպություններն[3] ամենից հաճախ ջատագովության գործողություններ են ձեռնարկում ազգային, ամենից հազվադեպ՝ միջազգային մակարդակում (Գծապատկեր 1.1):

**Գծապատկեր 1.1. Ի՞նչ հաճախականությամբ եք իրականացնում շահերի պաշտպանություն կառավարման հետևյալ մակարդակներում**




[3] Հարցմանը մասնակցած ՅԿ-ների կազմակերպական կարողությունների (օրինակ՝ անդամների թիվ, բյուջե, ֆինանսավորման աղբյուրներ) վերաբերյալ գծապատկերները ներկայացված են *Հավելված 2*-ում:

Դատելով իրենց կազմակերպությունների փորձից, ՀԿ պատասխանատուներից 16-ը նշել են, որ ջատագովության միջոցառումներն առավել արդյունավետ են տեղական, իսկ 15-ը՝ ազգային մակարդակում:

Պատասխանատուներից 7-ը նշել են, որ շահերի պաշտպանության իրականացումն առավել արդյունավետ է միջազգային մակարդակում (Գծապատկեր 1.2):

Ի՞նչ քայլեր են ձեռնարկել հարցմանը մասնակցած ՀԿ-ները ջատագովության իրենց նախաձեռնությունների իրականացման ընթացքում: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ՀԿ-ներն իրենց ՇՊ նախաձեռնությունները որպես կանոն սկսել են խնդրի ուսումնասիրությունից: Մասնավորապես, ՀԿ պատասխանատուների ճնշող մեծամասնության՝ 36-ի փոխանցմամբ, իրենց կազմակերպությունները տեղեկատվություն են հավաքագրել տվյալ խնդրի մասին՝ հետազոտությունների և/կամ շահագրգիռ կողմերի հետ քննարկումների միջոցով: Միևնույն ժամանակ, ՀԿ-ներից 33-ում ուսումնասիրվել են տվյալ ոլորտի իրավական ակտերը (Գծապատկեր 1.3):

Ջատագովության իրենց նախաձեռնություններն իրականացնելիս ՀԿ-ները նաև դիմել են տարբեր քայլերի՝ համախոհներին մոբիլիզացնելու և որոշում կայացնողների վրա ազդելու նպատակով: ՀԿ-ների պատասխանատուների մոտավորապես երկու երրորդը հայտարարել է, որ իրենց կազմակերպությունները կազմել և պետական կամ տեղական իշխանություններին են ուղղել դիմում/բողոքներ, հանդես են եկել տվյալ խնդրի վերաբերյալ դիրքորոշումով կամ առաջարկություններով, ինչպես նաև կազմակերպել են հանրային քարոզարշավներ և ակցիաներ (Գծապատկեր 1.3):

Հարցված ՀԿ պատասխանատուները գնահատել են նաև ջատագովության իրենց նախաձեռնությունների իրականացմանն ուղղված կոնկրետ քայլերի արդյունավետությունը: ՀԿ պատասխանատուներն ավելի շատ գոհ են (քան դժգոհ) իրենց կողմից իրականացված քայլերի արդյունավետությունից: Միաժամանակ, առավել արդյունավետ են համարվել իրավական փաստաթղթերի ուսումնասիրումը, գործողությունների ծրագրերի մշակումը, կոալիցիաների կազմումը և դրամահավաքը: ՀԿ պատասխանատուների փոխանցմամբ, նվազ արդյունավետ են եղել հայեցակարգերի ու քաղաքականության ամփոփագրերի, ինչպես նաև պետական կամ տեղական իշխանություններին դիմում/բողոքների ներկայացման քայլերը (Աղյուսակ 1.1):

Հարցված ՀԿ պատասխանատուների երեք քառորդից ավելին (32-ը) հայտարարել է, որ ՇՊ քաղաքականությունների շրջանակում երբևիցե մասնակցել է օրենսդրական փոփոխությունների (օրինակ՝ օրենսգրքերի, օրենքների, որոշումների և այլ իրավական ակտերի) մշակմանը: ՀԿ պատասխանատուների կեսից ավելին (22-ը)

հայտարարել է, որ իրենց կազմակերպությունները վերջին երեք տարիների ընթացքում օրենսգրքերի և օրենքների փոփոխություններ են նախաձեռնել:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ օրենսդրական նախաձեռնությունների արդյունքներին, ՀԿ պատասխանատուներից 7-ը նշել են, որ իրենց ոչ մի նախաձեռնություն հաջողությամբ չի պսակվել, պատասխանատուներից 10-ը նշել են, որ ընդունվել են իրենց նախաձեռնություններից 1-2-ը: Միաժամանակ, 4 ՀԿ պատասխանատուներ հայտարարել են, որ կարողացել են ընդունել տալ 4-ից 8 օրենսդրական նախաձեռնություն:

Հարցված ՀԿ-ների պատասխանատուները հայտնել են նաև, որ իրենց կազմակերպությունները պետական կառավարման տարբեր մարմինների կողմից ընդունվող քանի իրավական ակտերի փոփոխություններ կամ նախագծեր են նախաձեռնել և ինչ հաջողությամբ: Մասնավորապես, 11 ՀԿ միասին վերցրած նախաձեռնել են նախագահի, կառավարության և վարչապետի կողմից ընդունվող իրավական ակտերի 25 նախագիծ/փոփոխություն, որոնցից 9-ն ընդունվել են: Տասներեք ՀԿ միասին վերցրած նախաձեռնել են նախարարների և պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի 82 նախագիծ/փոփոխություն, որոնցից ընդունվել են 18-ը:

ՀԿ-ների նախաձեռնած նախագծերի/փոփոխությունների արդյունավետության տեսանկյունից առանձնանում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը: Դրանցում, 12 ՀԿ միասին վերցրած նախաձեռնել են 115 նախագիծ/փոփոխություն, որոնցից 65-ն ընդունվել են:

### *Քաղաքացիների և այլ ՔՀԿ-ների ներգրավում ՇՊ նախաձեռնություններում*

Հարցված ՀԿ պատասխանատուներից գրեթե բոլորը (37-ը) նշել են, որ աջակցում են քաղաքացիների մասնակցությանն իրենց ՇՊ նախաձեռնություններում: Այն հարցին, թե ինչպես են նրանք դա անում, պատասխանատուների կեսից ավելին (22-ը) հայտնել է, որ քաղաքացիներին «միշտ» կամ «հաճախ» ներգրավում են հանրային միջոցառումներին և ակցիաներին: Տասնչորսական կազմակերպություն քաղաքացիներին «միշտ» կամ «հաճախ» ներգրավում է օրենսդիր մարմիններին նամակներ հղելու գործընթացներում և քաղաքացիական լրագրության մեջ (Գծապատկեր 1.4):

**Գծապատկեր 1.4. Ինչպե՞ս եք մոբիլիզացնում քաղաքացիներին**




Հետազոտության շրջանակներում անցկացված ֆոկուսխմբային քննարկումները բացահայտել են այն պահանջները, որոնք շահառուները ներկայացնում են հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս ՇՊ նախաձեռնություններում մասնակցելու համար: Մասնավորապես, շահառուներն ակնկալում են, որ ՇՊ իրականացնող կազմակերպությունները լինեն վստահելի մի քանի տեսանկյունից: Նախ, այդ կազմակերպությունները պետք է բարի համբավ ունենան իրենց նախընթաց գործունեության արդյունքների շնորհիվ: Երկրորդ, նրանք պետք է համոզեն պոտենցիալ շահառուներին, որ ՇՊ միջոցառումներն իրոք պահանջված են և իրականացվում են ի շահ ընդհանուր հասարակության և ոչ թե միայն տվյալ ՀԿ-ի: ՀԿ-ները պետք է լինեն թափանցիկ իրենց ռազմավարությունների և մարտավարությունների առումով: Վերջապես, ՀԿ-ները պետք է մշտապես իրազեկեն պոտենցիալ շահառուներին սեփական գործունեության արդյունքների և ծրագրերի մասին:

> *«…Օրինակ, իմ համար, եթե շատ արդարացի է, եթե մենակ իր շահը չհետապնդի, մարդկանց, շահառուների միջոցով իր ֆինանսավորման հարցերը չկարգավորի, ես դա շատ հաշվի եմ առնում, եթե ինքը իրոք մտածում է ժողովրդի, հասարակության մասին, եթե արդարացիորեն այդ ամեն ինչը կկազմակերպվի, այդ դեպքում ես կմտածեմ, որ սա լուրջ*

*կազմակերպություն է, լուրջ գործունեություն է ծավալում ես որևէ խնդիր չեմ գտնի ու անպայման կհետևեմ»:* (Մարզային Ֆխ)

Հարկ է նաև նշել, որ շահառուների հետ ֆոկուսխմբային քննարկումների ընթացքում ի հայտ է եկել ջատագովության միջոցառումներին մասնակցելու կամ չմասնակցելու վերաբերյալ տարիքով պայմանավորված դիրքորոշումների տարբերություն: Մոդերատորների տպավորությամբ, երիտասարդ մասնակիցներն ավելի դրական դիրքորոշում են ունեցել ՀԿ-ների ԾՊ միջոցառումներին մասնակցելու հնարավորության հանդեպ: Նույն հարցի վերաբերյալ տարիքով ավագ մասնակիցների դիրքորոշումներում նկատվել է անտարբերություն և հիասթափություն:

Ըստ ՀԿ պատասխանատուներից 31-ի, իրենց կազմակերպություններից յուրաքանչյուրը 2014թ. ընթացքում իրականացված ջատագովության միջոցառումներում կարողացել է ներգրավել մինչև 100 կամավոր: Նույն ժամանակահատվածում 3 կազմակերպություն կարողացել է ներգրավել 200-300 կամավոր, իսկ 1-ը՝ 5000 կամավոր:

Այն հարցին, թե «Ո՞վ է մասնակցում (այս կամ այն կերպ) շահերի պաշտպանության Ձեր նախաձեռնություններին», միայն 11 ՀԿ պատասխանատու է հայտնել, որ քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններն են մասնակցում ջատագովության իրենց նախաձեռնություններին (Գծապատկեր 1.5):

### *Համագործակցություն լրատվամիջոցների հետ*

ՀԿ պատասխանատուները խորին հարցազրույցների ժամանակ մեծապես կարևորել են ԶԼՄ-ների դերը ԾՊ նախաձեռնությունների հանրայնացման գործում: Նրանց կարծիքով, ԾՊ որոշ նախաձեռնությունների դեպքում այդ դերը հատկապես կարևոր է (օրինակ՝ ընտանեկան բռնությունների վերաբերյալ դատական գործընթացների ժամանակ):

ՀԿ պատասխանատուներից մեկի համոզմամբ, լուսաբանելու ընթացքում լրատվամիջոցն ինքն ակամայից դառնում է ԾՊ գործիք: Հետևաբար, ՀԿ-ները ջատագովության իրենց նախաձեռնությունները հանրայնացնելիս պետք է դիմեն բոլոր լրատվամիջոցների օգնությանն՝ առանց նրանց միջև խտրականություն դնելու: ՀԿ մեկ այլ պատասխանատուի կարծիքով էլ, ԾՊ նախաձեռնությունների ժամանակ ՀԿ-ները պետք է տարբերակում դնեն իրենց հանրայնացման գործիքների միջև՝ կախված այն բանից, թե թիրախային լսարանը ով է:

*«...Հասցեական և ճշգրիտ իրազեկումը, այսինքն՝ ինֆորմացիան շատ նուրբ բանա էլի, պիտի իմանաս ում և ինչպես տեղեկացնես, կարողա բանգլադեշցի խաչիկ պապիկին պետքա իրա բիսետկայում նստել ու հետը զրուցել դրա մասին, այլ ոչ թե սոցցանցերում հայտարարություն*

*տարածել կամ հեռուստատեսությամբ, այսինքն շատ սպեցիֆիկ պետք ա աշխատել էլի, առանձնահատկությունները շատ են»:* (ՀԿ պատասխանատու)

ՀԿ պատասխանատուների հետ հարցազրույցներում ի հայտ են եկել նաև ԶԼՄ-ների հետ համագործակցությանը վերաբերող մի քանի խնդիրներ: Մասնավորապես, որոշ ՀԿ պատասխանատուներ մատնանշել են ԶԼՄ-ների կողմից լուսաբանման էթիկայի հետ կապված բացերը: ԶԼՄ ներկայացուցիչները երբեմն «ոչ ճիշտ» հարցեր են ուղղում շահառուներին կամ էթիկապես ոչ շահեկան վերնագրեր ընտրում նյութերի համար: Երբեմն էլ նրանք պարզապես դժկամություն են ցուցաբերում լուսաբանելու որոշ թեմաներ: ՀԿ պատասխանատուներն առանձին կարևորությամբ են ընդգծել լրագրողների մասնագիտական հմտությունները զարգացնելուն ուղղված դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը:

Ի տարբերություն երևանյան ՀԿ-ների, մարզային ՀԿ-ներին ավելի դժվար է ԶԼՄ-ների ուշադրությունը հրավիրել իրենց գործունեության վրա: Ըստ մարզային ՀԿ-ների պատասխանատուների, ազգային մակարդակի ԶԼՄ-ները (հանրապետական լրատվամիջոցները) ավելի հետաքրքրված են երևանյան ՀԿ-ների գործունեությամբ, մինչդեռ մարզային ՀԿ-ները մնում են լուսանցքում: Հանրապետական ԶԼՄ-ների նախապատվությունների սանդղակի վրա համայնքային նշանակության հարցերը վերջին տեղերում են: Որոշ ուշադրություն հնարավոր է լինում հրավիրել անձնական կապերի շնորհիվ: Միաժամանակ, մարզերում գործող մասնավոր լրատվամիջոցները, որպես կանոն, համաձայնվում են տեղական ՀԿ-ների գործունեությունը լուսաբանել համապատասխան վճարի դիմաց:

*«Դե քանի որ տեղական ստուդիաներն իրենք բոլորը մասնավոր են, իրենց չի հետաքրքրում, թե դու ինչ ես անում, պիտի փող տաս իրենց... Ֆինանսի վրա է, նենց չի, որ ինքը հետաքրքրված է այդ պրոբլեմով, ինքը գա քեզ ասի, արի էս պրոբլեմի մասին ասենք: Անկեղծ ասած տենց չի եղել, որ որևէ բան ասենք լուսաբանենք, իրանք ասեն, չէ էտ դրա մասին չենք ուզում խոսենք, չի եղել տենց բան, մենք ուղիղ եթերում սուր բան էլ ենք ասել, թոք շոուներում և այլն, տենց չենք ունեցել, բայց որ վճարովի են, դրանք մասնավոր են…”* (ՀԿ պատասխանատու)

Այնուամենայնիվ, որոշ տեղական ՀԿ-ներ փորձում են հաղթահարել լրատվամիջոցների բացակայության կամ անմատչելիության խոչընդոտը: Այդ ՀԿ-ներից մեկը, օրինակ, հանրայնացման իր աշխատանքները ստիպված է լինում իրականացնել հեռախոսազանգերի և/կամ անհատական հանդիպումների միջոցով:

*«Հա, երբ որ ինչ-որ բան ունենք, բոլորին զանգում ենք, հրավիրում ենք կամ այցելում ենք: Այլ տարբերակ չունենք: Միակ հաջողված տարբերակները դրանք են»:* (ՀԿ պատասխանատու)

Մեկ այլ մարզային ՀԿ իր նախաձեռնությունները հանրայնացնելու նպատակով դիմում է գործընկեր ՀԿ-ների օգնությանը: Համագործակցության արդյունքում այդ

կազմակերպությունը կարողանում է գրավել հանրապետական ԶԼՄ-ների ուշադրությունը:

Երեք էլեկտրոնային լրատվամիջոցների գլխավոր խմբագիրների հետ խորին հարցազրույցները ցույց են տվել, որ ՀԿ-ներն իրենց ԾՊ նախաձեռնություններն իրականացնելիս, որպես կանոն, դիմում են լրատվամիջոցների օգնությանը: Լրատվամիջոցներն, իրենց հերթին, փորձում են օգնել ՀԿ-ներին: Լրատվամիջոցներից մեկի դեպքում, խմբագիրն ինքն է որոշում, թե ՀԿ որ նախաձեռնությունը պետք է լուսաբանել, իսկ որը՝ ոչ: Այդ լրատվամիջոցը նաև սահմանափակվում է ՀԿ-ների նախաձեռնությունները զուտ լուսաբանելու գործառույթով: Երբեմն այս լրատվամիջոցը նաև օգնում է իր նյութերի «հերոսներին»՝ վերջիններիս խորհուրդ տալով, թե որ ՀԿ-ներին է անհրաժեշտ դիմել: Լրատվամիջոցներից մյուս երկուսը, լուսաբանելուց զատ, նաև որոշ դեպքերում փորձում են ոգևորել նախաձեռնությունները, նպաստել դրանց իրականացմանը կամ պաշտպանել դրանք հարձակումներից:

Լրատվամիջոցներից մեկի խմբագիրը խոսել է նաև այն ՀԿ-ների մասին, որոնց հետ համագործակցությունն արդյունավետ չէ: Մասնավորապես, նրա կարծիքով, ՀԿ-ների մի մասը լրատվամիջոցներին հիշում է միայն «ասուլիսից-ասուլիս»: Երբ լրատվամիջոցին է որևէ տեղեկություն անհրաժեշտ լինում որևէ խնդրի վերաբերյալ, ապա այդ խնդրով ենթադրաբար զբաղվող ՀԿ-ն հասանելի չէ կամ տեղեկատվություն չի տրամադրում: Լինում են նաև դեպքեր, երբ ՀԿ-ները փորձում են որևէ խնդիր լուծել՝ շրջանցելով լրատվամիջոցներին:

> *«Որովհետև շատ ՀԿ-ներ ուզում են խնդիրները միանգամից լուծել՝ առանց լրատվամիջոցի հարց բարձրացնելով, իրանք կարծում են, որ եթե իրանք միանգամից իշխանությանը դիմեն, կարող ա շատ ավելի արագ լուծվի, քան էտ խնդիրը բարձրացնելով, որովհետև մեր մոտ սենց ա, արի լուծենք, դրա մասին մի խոսա, չխոսաս էտ մասին, ես խոստանում եմ քեզ 2 ամսում, 3 ամսում լուծել, այ երբ որ 3 ամսում, 6 ամսում չի լուծվում, այ նոր էտ ժամանակ ՀԿ-ն որոշում ա հարցը բարձրացնել, բայց կարող ա էտ խնդիրն արդեն հրատապությունը կորցրած լինի կամ մեկ ուրիշն արդեն էտ հարցի մասին բարձրացրած լինի»:* (Լրատվամիջոցի խմբագիր)

Լրատվամիջոցների խմբագիրները նաև ընդունել են, որ ոչ բոլոր լրատվամիջոցներն են օբյեկտիվ ՀԿ-ների կարծիքը ներկայացնելիս: Այդ լրատվամիջոցները, որպես կանոն, որոշակի խմբավորումների շահեր են պաշտպանում:

> *«...Բայց կա տարբերակ, որ ՀԿ-ն խոսում ա, բայց ԶԼՄ-ն չի եթեր տալիս կամ տալիս ա էն հատվածը, որն իրան է ձեռնտու, դա հենց կա ասուլիսները, ամեն մեկը վերցնում ա ասուլիսներից էն գծերը, որն իրեն ձեռնտու ա, որն ավելի անմեղ ա...»:* (Լրատվամիջոցի խմբագիր)

*«Չգիտեմ, դե կան քարոզչամիջոցներ, որ օրինակ՝ ասենք շատ թշնամաբար են վերաբերվում, էտ ՀԿ-ներին, չէ, ասում են շպիոններ են, էս են, էն են, բան են, պարզ ա ըտեղ փակ ա: Կան կուսակցական բաներ, որ էլի թշնամի են համարում իրանց, չգիտեմ, դե եթե խոսքը ազատ լրատվամիջոցների մասին ա, կարծում եմ պրոբլեմ չկա ոչ մի տեղ»:* (Լրատվամիջոցի խմբագիր)

### *Հարաբերություններ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ*

#### Պետական կառավարման մարմինների և ՏԻՄ քաղաքականությունների հետազոտություն և մոնիտորինգ

Հարցված ՀԿ պատասխանատուների ճնշող մեծամասնությունը հայտարարել է, որ իրենց կազմակերպությունը քաղաքականությունների մոնիտորինգի նպատակներով տարբեր հաճախականությամբ հետազոտություններ է իրականացնում: Օրինակ՝ ՀԿ-ներից 4-ն այդպիսի հետազոտություններ անում է «միշտ», 15-ը՝ «հաճախ», և 15-ը՝ «ժամանակ առ ժամանակ»: Ընդամենը 6 կազմակերպություն «երբեք» այդպիսի հետազոտություն չի անում: Ընդ որում, ՀԿ-ների մեծամասնությունը կիրառում է հետազոտական մեթոդների զինանոցի հիմնական բաղադրիչները՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, հարցումներ, դեմ առ դեմ հարցազրույցներ և այլն (Գծապատկեր 1.6):

**Գծապատկեր 1.6. Հետազոտական և մոնիտորինգային ի՞նչ մեթոդներ եք կիրառում**




ՀԿ-ներից 32-ի դեպքում, մոնիտորինգային հետազոտություններին մասնակցում է նույն ՀԿ-ների աշխատակազմը: Մոնիտորինգային հետազոտություններ իրականացնելիս իրենց շահառուների կարողություններն օգտագործում են ՀԿ-ներից 22-ը, իսկ կազմակերպությանն անդամակցող անձանց կարողությունները՝ 18-ը: ՀԿ-ներից 24-ը նույն նպատակի համար համապատասխան փորձագետներ են վարձում (Գծապատկեր 1.7):

Հարցված ՀԿ պատասխանատուներից 30-ը նշել են, որ իրենց կազմակերպությունը քաղաքացիներին/շահառուներին մոնիտորինգային հետազոտություններում ներգրավում է տեղերում կազմակերպվող հանդիպումների,

29-ը՝ ՔՀԿ-ներում կազմակերպվող քննարկումների և 25-ը՝ քաղաքացիներին/շահառուներին կազմակերպության աշխատանքային խմբերում ներգրավելու միջոցով (Գծապատկեր 1.8):

Միևնույն ժամանակ, հարցմանը մասնակցած ՀԿ պատասխանատուների շուրջ երեք քառորդը (29-ը) հայտարարել է, որ իրենց կազմակերպությունը մոնիտորինգային հետազոտությունների արդյունքները դարձնում է հանրությանը հասանելի: Նույնքանն ասել են, որ այդ արդյունքներն օգտագործում են իրենց ծրագրերի մշակման և շահագրգիռ այլ կառույցներին ծանուցելու համար:

### Համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Հարցված ՀԿ պատասխանատուների մեծամասնությունը (27-ը) հայտարարել է, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակի որոշում կայացնողների հետ իրենց կազմակերպությունների համագործակցությունը «քաղաքականության փոփոխության, իրավական փաթեթի խթանման կամ ջատագովության» նպատակ է հետապնդել: ՀԿ-ների 22 պատասխանատու նշել է, որ պետական և ՏԻՄ որոշում կայացնողների հետ համագործակցում են որևէ իրավական ակտի, կամ նախագծի համատեղ մշակման նպատակով (Գծապատկեր 1.9):

Հարցմանը մասնակցած ՀԿ-ները պետական կառավարման ոլորտի հաստատություններից առավել շատ գործ են ունենում նախարարությունների հետ. մասնավորապես, ՀԿ 37 պատասխանատու հայտնել է, որ իրենց կազմակերպություններն առնչվել են նախարարությունների հետ: Միաժամանակ, կառավարությանն առընթեր մարմինների հետ առնչվել է 11, իսկ Ազգային ժողովի հանձնաժողովների հետ՝ 27 ՀԿ: ՀԿ 26 պատասխանատու է հայտնել, որ իրենց կազմակերպություններն առնչվել են քաղաքապետարանների, գյուղապետարանների և ավագանիների հետ: Մարզպետարանների հետ առնչվել է 25 ՀԿ:

ՀԿ-ների համար ամենից դժվար եղել է համագործակցությունն ԱԺ ա) տնտեսական հարցերի, բ) պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, ինչպես նաև գ) գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովների հետ: Ամենից դյուրին համագործակցությունը ստացվել է ԱԺ ա) գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի և բ) եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների հետ (Աղյուսակ 1.2):

Կառավարության պարագայում, ամենից դժվար համագործակցությունը ստացվել է Բնապահպանության, Էկոնոմիկայի նախարարությունների և Կառավարության աշխատակազմի հետ, մինչդեռ ամենից դյուրին

համագործակցությունը՝ Գյուղատնտեսության, Քաղաքաշինության և Ֆինանսների նախարարությունների հետ (Աղյուսակ 1.3):

Կառավարության առընթեր և պետական այլ մարմինների պարագայում, ՀԿ-ների համար ամենից դժվար համագործակցությունը ստացվել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ Վերահսկիչ պալատի և ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ: Ամենից դյուրինը ՀԿ-ների համար եղել է համագործակցությունը ՀՀ Դատախազության և Մարդու իրավունքների պաշտպանի հետ (Աղյուսակ 1.4):

Մարզպետարանների պարագայում ՀԿ-ների հետ համագործակցելու ամենաքիչ պատրաստակամությունը ցուցաբերել են Արագածոտնի, Սյունիքի, Վայոց Ձորի և Շիրակի մարզպետարանները: Ամենադյուրին համագործակցությունն ստացվել է Կոտայքի և Գեղարքունիքի մարզպետարանների հետ: Միաժամանակ, ՀԿ պատասխանատուների գնահատմամբ, գյուղական և քաղաքային ավագանիների հետ իրենց կազմակերպությունների համագործակցությունն ավելի դժվար է ստացվել, քան քաղաքապետարանների և գյուղապետարանների հետ (Աղյուսակ 1.5):

Այն հարցին, թե «Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կբնութագրեք Ձեր կազմակերպության հարաբերությունները պետական կառավարման մարմինների հետ», ՀԿ պատասխանատուներից 31-ն ասել են, որ այդ հարաբերությունները համագործակցային են: Միաժամանակ, 40 պատասխանատուներից 16-ը նշել են, որ այդ հարաբերությունները կարելի է բնութագրել որպես «դիմակայություն»: Ընդ որում, պետական մարմինների հետ իրենց հարաբերություններն այսպես որակող ՀԿ պատասխանատուներից 6-ը նշել են, որ դիմակայության դեպքերը տեղի են ունենում «միշտ», իսկ 10-ը՝ «երբեմն»:

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրենց հարաբերությունները համագործակցային են համարել հարցված ՀԿ պատասխանատուներից 29-ը: Յոթ ՀԿ պատասխանատու այդ հարաբերությունները բնութագրել է որպես «դիմակայություն». ընդ որում, նրանցից 6-ի փոխանցմամբ դիմակայության դեպքերը տեղի են ունենում «երբեմն», իսկ 1-ի փոխանցմամբ՝ «միշտ»:

Այն հարցին, թե «Ո՞րն է պետական մարմինների հետ հարաբերությունների բացակայության կամ սահմանափակության պատճառը», հարցմանը մասնակցած 40 ՀԿ պատասխանատուներից ընդամենը երեքն են ցանկություն հայտնել որևէ պատճառ նշել: Նրանցից մեկի կարծիքով, օրինակ, պետական մարմինները հետաքրքրված չեն համագործակցությամբ: Մյուսի կարծիքով. «Պետական մարմինները միշտ չէ, որ պատրաստակամ են արդյունավետ համագործակցության: Հաճախ դա նրանց կողմից իմիտացիոն բնույթ է կրում»: Երրորդը նշել է, որ իրենց կազմակերպությունն ընդհանրապես կարիք չունի համագործակցելու պետական մարմինների հետ:

ՀԿ պատասխանատուների հետ անցկացված խորքային հարցազրույցների ընթացքում հնչել է այն կարծիքը, որ նույնիսկ այն դեպքերում, երբ ՀԿ-ները և պետական մարմինները համատեղ որևէ նախաձեռնություն են սկսում իրականացնել (օրինակ՝ փորձագիտական վերլուծություններ կամ որևէ խնդրի վերաբերյալ իրավիճակների նկարագրություններ), այն հաճախ մնում է կիսատ: Պատճառը պետական մարմինների ցանկության պակասն է ՀԿ-ներին ներգրավելու որոշումների ընդունման հետագա գործընթացներին: Այսինքն, ՀԿ-ների գործառույթն ավարտվում է խորհրդատվությամբ միայն:

Որպես մեկ այլ խոչընդոտ, ՀԿ պատասխանատուները մատնանշել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական մարմինների հարաբերությունների անձնավորված լինելը: Այսինքն, դրանք պայմանավորված են ոչ այնքան ինստիտուցիոնալ կարգավորումներով, որքան անձնային մղումներով և գործողություններով: ՀԿ պատասխանատուների կարծիքով, սա բերում է իրավիճակների, երբ անձերի փոփոխության դեպքում հաճախ պետք է վերանայվեն նաև պայմանավորվածությունները (կարող են նույնիսկ չեղարկվել արդեն կատարված գործերը):

Քաղաքացիական հասարակության փորձագետների հետ անցկացված կլոր-սեղան քննարկման ընթացքում փորձագետները ևս նշել են, որ համագործակցության ընթացքում ՀԿ-ների ազդեցությունը պետական մարմինների վրա ընդհանուր առմամբ թույլ է: Մասնավորապես, ՀԿ-ների մի մասը պետական մարմինների հետ համագործակցելիս «կռվով-դավով» կարողանում է հասնել որոշ, բայց ոչ մեծ փոփոխությունների: Ըստ փորձագետների, ավելի մեծ ազդեցություն ունենալու համար ՀԿ-ները պետք է քաղաքականության մեջ լինեն:

ՀԿ-ների մյուս՝ չպայքարող մասն էլ փորձագետների կողմից բնութագրվել է որպես «կոլաբորացիոնիստների» խումբ: Վերջիններս ավելի շատ ներգրավված են համագործակցության բյուրոկրատական շրջանակներում (օրինակ՝ տարբեր գերատեսչական խորհուրդներում) և պետական մարմինների հետ համագործակցելու իմիտացիա են ստեղծում: Փորձագետների կարծիքով, այդ իմիտացիան հաճախ օգտագործվում է հասարակության և դոնորների աչքերում համագործակցության պատրանք ստեղծելու նպատակով:

### Համագործակցությունը ՀԿ-ների հետ՝ պետական մարմինների ներկայացուցիչների աչքերով

Խորքային հարցազրույցների ընթացքում պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները ՀԿ-ների հետ կապված մի քանի խնդիր են մատնանշել, որոնք, իրենց կարծիքով, խոչընդոտում են ՀԿ-պետական մարմիններ արդյունավետ համագործակցությանը: Առաջին խնդիրը վերաբերում է ՀԿ-ների ֆինանսական անկախությանը: Մասնավորապես, պետական մարմինների ներկայացուցիչներն

ակնկալում են համագործակցել այն ՀԿ-ների հետ, որոնք ունեն կայուն բյուջե ի հաշիվ ֆինանսավորման ներհասարակական (ոչ արտասահմանյան) աղբյուրների: Հակառակ դեպքում, պետական մարմինների ներկայացուցիչների համոզմամբ, կախվածությունն արտաքին գրանտերից հանգեցնում է մի իրավիճակի, երբ ՀԿ-ները դառնում են անսկզբունքային, մոռանում են իրենց առաքելությունը և ավելի շատ սպասարկում դոնորների օրակարգը:

ՀԿ-ներին ներկայացվող երկրորդ պահանջը մասնագիտական ամուր հիմքերն են և փորձառությունը: Պետական մարմինների ներկայացուցիչների կարծիքով, համագործակցության ընթացքում ՀԿ-ների մասնագետները պետք է ոլորտին և խնդրին տիրապետեն բարձր մակարդակով, նույնիսկ ավելի բարձր, քան պետական գերատեսչությունների փորձագետները: Դրա շնորհիվ ՀԿ-ները կկարողանան այլընտրանքային լուծումներ առաջարկել և խնդիրների վերաբերյալ ավելի բազմակողմանի պատկեր ստեղծել: Որպես համագործակցության կոնկրետ խոչընդոտի օրինակ, պետական մարմինների ներկայացուցիչներից ոմանք մատնանշել են այն դեպքերը, երբ ՀԿ-ները որևէ խնդիր են բարձրացնում առանց այդ խնդիրը պատշաճ ուսումնասիրելու:

Որպես համագործակցության մեկ այլ խոչընդոտ, պետական մարմինների ներկայացուցիչներից ոմանք մատնանշել են ՀԿ-ների համագործակցելու ժամանակավրեպ նախաձեռնությունները: Այս խնդիրը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ ՀԿ-ները պետական մարմինների ներկայացուցիչներին փորձում են ներգրավել համագործակցության մեջ իրենց ռազմավարությունները և գործողությունների ծրագրերը հաստատելուց հետո միայն: Այս մոտեցումը պետական մարմինների ներկայացուցիչներին դուրս է թողնում խնդիրների ձևակերպման և գործողությունների պլանավորման փուլերից:

Պետական կառավարման ոլորտի մասնագետների կարծիքով, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ անարդյունավետ համագործակցության պատճառներից մեկն էլ ՀԿ-ների մի մասի որդեգրած կանխակալ դիրքորոշումն է պետական մարմինների նկատմամբ: Այսպես, կան ՀԿ-ներ, որոնք ի սկզբանե մերժում են պետական մարմիններից դուրս եկող որևէ գաղափար, նախաձեռնություն կամ պետական մարմինների հետ համագործակցելու որևէ հնարավորություն: ՀԿ-ների մի մասն էլ հենց սկզբից պետական մարմիններին «մերկացնելու» կամ «խայտառակ անելու» քաղաքականություն է որդեգրում:

Խորքային հարցազրույցների ընթացքում պետական կառավարման ոլորտի ներկայացուցիչները միաժամանակ ընդունել են, որ պետական մարմինները ևս որոշակի վերաբերմունք և գործելաոճ պետք է որդեգրեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցելու համար: Նրանց կարծիքով, պետական մարմինները նախ պետք է լրջորեն մոտենան ՀԿ-ների նախաձեռնություններին և խորամուխ լինեն նրանց բարձրացրած

մտահոգություններին և առաջարկներին: Երկրորդ, պետական մարմինները պետք է փորձեն երկարաժամկետ համագործակցության «գործընկերային» և «փոխադարձ հարգանքի» ձևաչափեր գտնել ՀԿ-ների հետ: Երրորդ, պետական մարմինները պետք է հնարավորինս բաց լինեն տեղեկատվություն տրամադրելու առումով (օրինակ՝ նրանք պետք է հանրայնացնեն իրենց բոլոր նախագծերը վեբկայքերի միջոցով): Սա ՀԿ-ներին հնարավորություն կընձեռի ավելի հիմնավոր ուսումնասիրություններ կատարել և հանդես գալ նոր նախաձեռնություններով: Վերջապես, պաշտոնական հանդիպումներին զուգահեռ, պետական մարմինների ներկայացուցիչները պետք է ոչ ֆորմալ ձևաչափեր որոնեն՝ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար:

**Այսպիսով**, խնդրո առարկա 40 ՀԿ-ներն ամենից շատ ՇՊ գործողություններ են ձեռնարկում **ազգային մակարդակում**: Համախոհներին մոբիլիզացնելու և որոշում կայացնողների վրա ազդելու նպատակով ՀԿ-ների մեծամասնությունն իրենց ջատագովության նախաձեռնությունների շրջանակներում **կոալիցիաներ** են ստեղծում, **լոբբիստական** գործողություններ և **քարոզարշավներ** իրականացնում, **դիմում-բողոքներ** ներկայացնում և այլն: ՀԿ-ներն իրենց այս քայլերի արդյունավետությունն, ընդհանուր առմամբ, դրական են գնահատում:

ՀԿ-ների **երեք քառորդից ավելին** իրենց ՇՊ քաղաքականությունների շրջանակում երբևիցե մասնակցել է **օրենսդրական փոփոխությունների մշակմանը**: Վերջին երեք տարիների ընթացքում **ՀԿ-ների մոտ երկու երրորդին հաջողվել է ընդունել տալ գոնե մեկ օրենսդրական նախաձեռնություն**: ՀԿ-ներն ակտիվ են եղել հատկապես **ՏԻՄ**-երի կողմից ընդունվող իրավական ակտեր կամ այդ ակտերում փոփոխություններ նախաձեռնելու գործում:

**Գրեթե բոլոր ՀԿ-ները խրախուսում են քաղաքացիների մասնակցությունը ՀԿ-ների ջատագովության նախաձեռնություններին**: Ամենից հաճախ դա արվում է քաղաքացիներին հանրային միջոցառումներում, աշխատանքային խմբերում, ինչպես նաև օրենսդիր մարմիններին նամակներ և պահանջագրեր հղելու գործընթացներում ներգրավելու միջոցով:

ՀԿ-ների միայն **մեկ քառորդն է**, որ **քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների** է մասնակից դարձնում ջատագովության իր նախաձեռնություններին: ՀԿ ներկայացուցիչների համոզմամբ, ՇՊ նախաձեռնությունների հանրայնացման գործում **ԶԼՄ-ների դերը նշանակալի է**: Ի տարբերություն երևանյան ՀԿ-ների, մարզային ՀԿ-ների համար ավելի դժվար է ԶԼՄ-ների ուշադրությունը հրավիրել իրենց ՇՊ նախաձեռնությունների վրա:

ՀԿ-ների **ճնշող մեծամասնությունը** տարբեր հաճախականությամբ **պետական մարմինների և ՏԻՄ-երի քաղաքականությունների հետազոտություններ** է իրականացնում (օրինակ՝ հարցումներ, հարցազրույցներ,

փաստաթղթերի ուսումնասիրություններ): ՀԿ-ների մոտավորապես **կեսի դեպքում** նման հետազոտություններին մասնակցում են կազմակերպությունների **անդամները և շահառուները**: ՀԿ-ների երեք քառորդն այդ հետազոտությունների արդյունքները հասանելի է դարձնում հանրությանը:

ՀԿ-ների մոտ **երեք քառորդն** իրենց հարաբերությունները պետական կառավարման մարմինների և ՏԻՄ-երի հետ որակել է որպես **համագործակցային**: Միաժամանակ, ՀԿ-ների մոտավորապես **մեկ երրորդը** պետական մարմինների հետ իրենց հարաբերությունները որակել է որպես **դիմակայություն**: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքով, նույնիսկ համագործակցության դեպքում ՀԿ-ների ազդեցությունը պետական կառավարման ոլորտի մարմինների վրա **թույլ** է: Պետական կառավարման մարմինների կարծիքով, համագործակցության հայտ ներկայացնող ՀԿ-ները պետք է լինեն վստահելի և իրենց գործում արհեստավարժ:

## Բաժին 2. Ջատագովության առավել հաջողված դեպքեր

ՀԿ-ների պատասխանատուների հետ անցկացված հարցման նպատակներից մեկն էր բացահայտել կազմակերպությունների կողմից երբևէ իրականացված շահերի պաշտպանության առավել հաջողված/արդյունավետ նախաձեռնությունները և դրանց հիմքում ընկած գործոնները: Այդ նպատակով հասարակական կազմակերպության յուրաքանչյուր պատասխանատուի առաջարկվել էր պատասխանել նման մեկ դեպքի վերաբերող հարցախմբի: Խորին հարցազրույցներին մասնակցած ՀԿ պատասխանատուներին ևս առաջարկվել էր նկարագրել իրենց կազմակերպությունների կողմից իրականացված ջատագովության առավել հաջողված դեպքերը:

*Ջատագովության առավել հաջողված նախաձեռնությունների ընդհանուր բնութագիր*

ՀԿ պատասխանատուների փոխանցմամբ, ՇՊ իրենց առավել հաջողված նախաձեռնությունները տեղի են ունեցել 2000-2015թթ. ընթացքում: Այս նախաձեռնությունների ամենամեծ բաժինը՝ շուրջ մեկ երրորդը, վերաբերել է մարդու իրավունքների պաշտպանության տարբեր հիմնախնդիրների: Մնացյալ նախաձեռնություններով փորձ է արվել լուծելու սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության, տեղական ինքնակառավարման, ընտրությունների, հասարակական կազմակերպությունների և այլ ոլորտների վերաբերող հիմնախնդիրներ:

ՀԿ պատասխանատուներից 29-ը հայտարարել է, որ շահերի պաշտպանության իրենց հաջողված նախաձեռնության շրջանակներում մշակվել և ներկայացվել են իրավական ակտերում փոփոխություն կատարելու առաջարկներ: Ընդ որում, կազմակերպությունների մեծ մասը (21-ը) կատարել է 1-5 նման առաջարկ, 7 կազմակերպություն՝ 6-15, և 1 կազմակերպություն՝ 60 առաջարկ: Ընդհանուր առմամբ, բոլոր կազմակերպությունները, միասին վերցված, ՇՊ իրենց լավագույն նախաձեռնության շրջանակներում կատարել են 168 առաջարկ:

Խորքային հարցազրույցներին մասնակցած ՀԿ պատասխանատուների փոխանցմամբ, իրենց կազմակերպություններն անհատական կամ խմբային ջանքերի շնորհիվ մի շարք բնագավառներում կարողացել են լուրջ ազդեցություն բանեցնել օրենսդիր մարմինների վրա: Օրինակ, ՀԿ-ներից մեկը որոշման նախագիծ է հեղինակել դպրոցահասակ երեխաների առողջության վերաբերյալ և հասել մարզխորհրդի կողմից դրա ընդունմանը: Մեկ այլ դեպքում, կազմակերպությունը միացել է հղիների նպաստների կրճատման օրենքի նախագծի դեմ ընթացող շարժմանը և նպաստել այդ նախագծի չեղարկմանը:

*Հիմնախնդրի ուսումնասիրություն*

Հարցված ՀԿ պատասխանատուների մեծամասնությունը (25-ը) նշել է, որ խնդրո առարկա նախաձեռնությունները սկսելու համար հիմք են հանդիսացել իրենց իսկ կազմակերպությունների անցկացրած հետազոտության կամ մոնիտորինգի արդյունքները: Պատասխանատուներից 10-ը նշել են, որ այլոց կողմից անցկացված հետազոտությունների ու մոնիտորինգի արդյունքներն են հիմք հանդիսացել այդ նախաձեռնությունների համար (Գծապատկեր 2.1):

Որակական հարցազրույցների ընթացքում ևս, ՀԿ պատասխանատուները պարզաբանել են իրենց ՇՊ լավագույն նախաձեռնությունների ակունքները: Որպես կանոն, դրանց գաղափարները պայմանավորված են եղել կազմակերպությունների՝ ոլորտում աշխատանքի երկարատև փորձով, շփումներով, ինչպես նաև թիրախ կամ շահառու խմբերի հետ տարվող աշխատանքով:

> *«Երկարատև տարիների իրավական խորհրդատվության տրամադրումը բերում է նրան, որ հասարակության խոցելի տեղերը ավելի լավ ես հասկանում, խնդիրների ինստիտուցիոնալ համակարգային էությունն ես լավ տեսնում...»:* (ՀԿ պատասխանատու)

Ըստ որակական հարցազրույցների նյութերի, մարդկանց հետ դեմ առ դեմ շփումները հատկապես կարևոր հիմք են հանդիսացել մարզային ՀԿ-ների ՇՊ նախաձեռնությունների համար: Մասնավորապես, համայնքների փոքրությամբ պայմանավորված, ՀԿ-ներն այստեղ ավելի լավ են կարողացել տեսնել մարդկանց հուզող խնդիրները և փորձել ավելի արագ լուծել դրանք:

Որակական հարցազրույցների ժամանակ, ՀԿ ներկայացուցիչները կարևորել են նաև ջատագովության առավել հաջողված միջոցառումների իրականացման ընթացքում հետազոտությունների և արդեն գոյություն ունեցող վիճակագրական տվյալների դերը: Հնչած կարծիքներից մեկի համաձայն, ՇՊ քաղաքականությունների իրականացման շրջանակներում ՀԿ-ները հատկապես պետք է «երես առ երես աշխատանք» տանեն շահառուների հետ և հասկանան նրանց խնդիրները:

> *«Ծրագրի արդյունավետությունը պայմանավորված է հենց էտ հետազոտությունով, եթե դու հստակ չիմանաս խնդիրը, չքարտեզագրես այն, և համապատասխան գործիքակազմ չմշակես, շատ ավելի ոչ պրոֆեսիոնալ մոտեցում եմ ես դա դիտարկում, խնդիր լուծել չիմանալով նրա պատճառները, ակունքը և ընդհանրապես ինչ է այն իրենից ենթադրում»:* (ՀԿ պատասխանատու)

*Ջատագովության գրավոր ռազմավարություն*

Այն հարցին, թե արդյոք ջատագովության առավել հաջողված նախաձեռնության համար ՀԿ-ներն ունեցել են գրավոր մշակած ռազմավարություն և/կամ գործողությունների ծրագիր, հարցված ՀԿ պատասխանատուների կեսից ավելին (24-ը) տվել է դրական պատասխան: ՀԿ պատասխանատուներից 21-ը նշել է, որ իրենց

ՇՊ նախաձեռնության ռազմավարությունը գործողությունների պլան  է ունեցել (Գծապատկեր 2.2):

### *Համագործակցություն շահագրգիռ կողմերի հետ*

Հարցված ՀԿ պատասխանատուներից 37-ը հայտնել է, որ ջատագովության առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում իրենց կազմակերպությունը համագործակցել է այլ շահագրգիռ կողմերի հետ: Այն հարցին, թե «Ինչպե՞ս կգնահատեիք շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը ջատագովության այդ նախաձեռնության շրջանակներում», ՀԿ պատասխանատուների կեսից ավելին (24-ը) տվել է «լավ» կամ «շատ լավ» գնահատականը: ՀԿ պատասխանատուներից 10-ն այդ համագործակցությանը «միջին» գնահատական է տվել և միայն 2-ը՝ «վատ»:

ՀԿ պատասխանատուների երեք քառորդից ավելին (32-ը) հայտնել է, որ խնդրո առարկա նախաձեռնության շրջանակներում այլ շահագրգիռ  կողմերի հետ համագործակցել է «հատուկ կամ պարբերական հանդիպումների» միջոցով: ՀԿ-ների 21 պատասխանատու հայտնել է, որ համագործակցել է ռեսուրսների համատեղ օգտագործման, 20-ը լոբբինգի, և 16-ը համատեղ ծրագրերի մշակման միջոցով (Գծապատկեր 2.4):

### *Համագործակցություն այլ ՔՀԿ-ների հետ*

Հարցված ՀԿ պատասխանատուների կեսից ավելին (26-ը) հայտարարել է, որ ջատագովության իրենց առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում անդամակցել է որևիցե կոալիցիայի: Այդ ՀԿ-ներից ուղիղ կեսի (13-ի) դեպքում կոալիցիան ներառել է 3-10 կազմակերպություն: Մեկական ՀԿ-ի պատասխանատու հայտարարել է, որ իրենց կազմակերպություններն անդամակցել են 150 և 250 կազմակերպություններից բաղկացած կոալիցիաների (Գծապատկեր 2.3):

ՀԿ-ներից 8-ի պատասխանատուները հայտարարել են, որ հենց իրենց կազմակերպություններն են ստեղծել այդ կոալիցիաները և ակտիվ մասնակցություն ունեցել դրանցում: Եվս 8 ՀԿ միացել են արդեն գոյություն ունեցող կոալիցիաների և ակտիվ մասնակցություն ունեցել: ՀԿ-ների 5 պատասխանատու հայտնել է, որ իրենց կազմակերպություններն են նախաձեռնել կոալիցիայի ստեղծումը, սակայն վերջինիս աշխատանքներում պասիվ դերակատարում են ունեցել:

Միաժամանակ, կոալիցիաներին անդամակցած ՀԿ պատասխանատուների կեսը (13-ը) նշել է, որ իրենց կազմակերպությունների մասնակցությունը կոալիցիայի աշխատանքներին շատ արդյունավետ է եղել: Տասներկուսի կարծիքով, իրենց կազմակերպությունների մասնակցությունը պարզապես արդյունավետ է եղել: Միայն մեկն է ասել, որ իրենց անդամակցությունը կոալիցիային եղել է ոչ այնքան արդյունավետ:

Խորքային հարցազրույցներին մասնակցած ՅԿ պատասխանատուները և պարբերաբար նշել են կոալիցիաների անգնահատելի դերը ջատագովության իրենց առավել հաջողված միջոցառումներում: Մասնավորապես, նրանք ընդգծել են կոալիցիայի ներսում աշխատանքի բաժանման, ինչպես նաև փորձի ու ռեսուրսների փոխանակման արդյունավետությունը: ՅԿ պատասխանատուները նաև հատուկ շեշտադրել են քաղաքականությունների վրա կոալիցիաների ազդեցության ներուժը:

*«Կոալիցիան շատ կարևոր ա, որովհետև շահերի պաշտպանությունը մենակ ինչքան էլ հզոր կազմակերպություն լինես, ուզում ա տանկ լինես, չես կարող անել»:* (ՅԿ պատասխանատու)

*«Եթե կոալիցիայով է, որոշումների վրա ազդելու ռեսուրսները շատ ավելի մեծ են : Մեր կազմակերպությունը երբևիցե իրեն թույլ չէր տա տեղական ինքնակառավարման ոլորտից բացի որևիցե արտահայտություն աներ, բայց, օրինակ մենք լինելով Արևելյան գործընկերության պլատֆորմի անդամ, արդեն, որպես պլատֆորմ ներկայացնող կազմակերպություն, օրինակ որոշում ենք ընդունում ինչ-որ մի երևույթի հանդեպ հայտարարությամբ հանդես գալ և դրա տակ ստորագրել, հստակ իմանալով, որ այդ պլատֆորմում ընդգրկված կազմակերպությունների քննարկումների միջով անցած փաստաթուղթը որոշակի ուժ ունի»:* (ՅԿ պատասխանատու)

Յարկ է նաև նշել, որ կոալիցիաների արդյունավետության մասին խոսելիս որակական հետազոտության մասնակիցները ցանկացել են տարբերակում դնել ներքևից ինքնաբուխ և վերևից արհեստականորեն ստեղծված կոալիցիաների միջև: Նրանց համոզմամբ, հենց ինքնաբուխ կոալիցիաներն են, որ աչքի են ընկնում աշխատանքի արդյունավետությամբ (Պատմություն 2.1 և 2.2):

**Պատմություն 2.1. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա**

Քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների միջև համագործակցության հաջող օրինակ է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան: Ընտանեկան բռնության ենթարկված 20-ամյա Զարուհի Պետրոսյանի մահից հետո ստեղծված այս կոալիցիան արդեն հինգ տարի է՝ պայքար է տանում Յայաստանում ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկումը բարձրացնելու և ընտանեկան բռնության դեպքերը կանխելու ուղղությամբ:

Կոալիցիայի հաջող գործունեության հիմքում ընկած է կոալիցիային մաս կազմող կազմակերպությունների միջև աշխատանքի արդյունավետ բաժանումը և ջանքերի համահունչ գործադրումը: Օրինակ՝ կազմակերպությունների միջև պայմանավորվածություն է գործում՝ ընդհանուր քննարկման արժանացնել կոալիցիայի անունից ներկայացվող նամակները և դիմումները: Միջոցառումներին յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ներկա լինի առնվազն երկու հոգով և երկու պաստերով: Եթե կոալիցիայի անդամներից որևէ մեկը «հարձակման» է ենթարկվում, կոալիցիան պետք է հանդես գա մեկ միասնական ձայնով: Ընդ որում, կոալիցիան գործել է առանց որևէ ֆինանսավորման և առանց ֆորմալ գրանցման:

**Պատմություն 2.2. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ**

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակի ջատագովության ջանքերի շնորհիվ ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են հոգեկան առողջական խնդիրներ ունեցողներին վերաբերող կարևոր փաստաթղթեր (հայեցակարգեր): Դրանք վերաբերում են հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, ինչպես նաև նրանց համար համայնքային ծառայությունների ստեղծմանը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարողացել է նաև քաղաքացիական վերահսկողության հնարավորություններ ստեղծել ավանդաբար փակ համարվող ինստիտուտներում, ինչպիսիք են, օրինակ, հոգեկան առողջությանն առնչվող հաստատությունները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նշված նախաձեռնությունների հաջողության հիմքում ընկած է մի քանի հիմնական գործոն: Նախ, կազմակերպությունը չի վարանելստանձնել առաջնորդությունը և պատրաստ է եղել «օրինակ» ծառայել հասարակության և նմանատիպ գործունեություն իրականացնողների համար: Երկրորդ, կազմակերպությունը կարողացել է ստանալ գործընկեր ՀԿ-ների աջակցությունը: Վերջապես, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հետևողական և համառ է գտնվել իր քայլերն իրականացնելիս: Կազմակերպությունը չի դադարել աշխատել, եթե նույնիսկ ինչ-որ պահի անհաջողության է հանդիպել:

### *Քաղաքացիների ներգրավումը*

ՀԿ-ների պատասխանատուների երեք քառորդից ավելին (31-ը) նաև հայտարարել է, որ ՇՊ իրենց առավել հաջողված նախաձեռնություններին մասնակցել են քաղաքացիները: Ընդ որում, կազմակերպություններից 25-ի դեպքում մասնակցած քաղաքացիների թիվը տատանվել է 3-100-ի միջակայքում, 4 կազմակերպության դեպքում՝ 250-1000-ի միջակայքում: Կազմակերպություններից մեկը կարողացել է ներգրավել 2700 քաղաքացի: Ընդհանուր առմամբ, նշված 31 կազմակերպությունների առավել հաջողված նախաձեռնություններին մասնակցել է 5842 քաղաքացի (Պատմություն 2.3):

**Պատմություն 2.3. «Լոռեցիների միավորում» ԲՀԿ**

«Լոռեցիների միավորում» բարեգործական հասարակական կազմակերպության (ԲՀԿ) կողմից իրականացված «Մասնակցային կառավարում Վանաձորում» նախաձեռնությունը փորձել է վեր հանել բնակիչների համայնքային խնդիրները և լուծում տալ դրանց՝ բնակիչների մասնակցությամբ: Նախաձեռնության անդամները բնակիչներին օգնել են համոզվել, որ հենց իրենք կարող են լուծել իրենց խնդիրները: Նախաձեռնության շրջանակներում կիրառվել են բակային հանդիպումների, կարիքների գնահատման, ստորագրահավաքների, համապատասխան գերատեսչություններ դիմումների ներկայացման գործիքները: Նախաձեռնության նկատելի հաջողություններից է քաղաքի որոշ թաղամասերի ջրամատակարարման ծառայության որակի բարելավումը: Մասնավորապես, ըստ ՀԿ ղեկավարի և հարցված շահառուների, տվյալ ծառայությունը մատուցողներն ավելի պատասխանատու և հաշվետու են դարձել: Օրինակ՝ ջրամատակարարման դադարեցումից առաջ նրանք նախազգուշացնում են բնակիչներին և այլընտրանքային ջրօգտագործման ձևեր առաջարկում:

ՀԿ ղեկավար Մենուա Բրուտյանի կարծիքով, հաջողության կարևոր գործոններից է հանդիսացել քաղաքացիների հետ ակտիվ և դեմ առ դեմ աշխատանքը, ինչպես նաև քաղաքացիներին սեփական խնդիրների լուծմանը մասնակից դարձնելը: Նախաձեռնության ընթացքում ՀԿ-ն առաջնորդվել է նախապես մշակված «ճկուն» ծրագրով, որը իրավիճակով պայմանավորված մարտավարական փոփոխությունների է ենթարկվել: ՀԿ-ն, կազմակերպության անդամների անմիջական մասնակցությամբ, իրականացրել է նաև հետազոտություններ և դրանց արդյունքները համադրել հասանելի այլ տվյալների (օրինակ՝ փորձագիտական կարծիքի) հետ:

### *Հաղորդակցության եղանակները*

Ջատագովության առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում, ՀԿ-ները թիրախային լսարաններին հասնելու մի շարք մեթոդներ են կիրառել: Ամենից շատ օգտագործված միջոցը, թերևս, սոցիալական մեդիայի գործիքներն են եղել (խումբ, բլոգ, վեբկայք և այլն): Իրենց թիրախային խմբերին հասնելու համար այս միջոցը «միշտ» կամ «հաճախ» օգտագործել են հարցմանը մասնակցած ՀԿ-ներից 27-ը (Գծապատկեր 2.5):

ՀԿ-ների ճնշող մեծամասնությունը (35-ը) իրենց առավել հաջողված ՇՊ նախաձեռնության շրջանակներում ներգրավել են նաև զանգվածային լրատվության միջոցներին: Այն հարցին, թե ինչպես են նրանք ներգրավել լրատվամիջոցներին, ՀԿ-ների պատասխանատուները մատնանշել են մի քանի եղանակ: Մասնավորապես, 27 ՀԿ-ներ ԶԼՄ-ներին ներգրավելու նպատակով օգտագործել է մամլո հաղորդագրությունները, 21-ներ՝ մամլո ասուլիսները: Քանվեց ՀԿ-ներ լրագրողներին պարզապես հրավիրել են իրենց կազմակերպություն:

**Այսպիսով**, ՀԿ-ների **առավել հաջողված ՇՊ նախաձեռնությունների** ամենամեծ մասը՝ մեկ երրորդը, **վերաբերել է մարդու իրավունքների պաշտպանության**

տարբեր հիմնախնդիրների: ՅԿ-ների **կեսից ավելին** իրենց առավել հաջողված ՇՊ նախաձեռնությունները սկսել է իրենց իսկ կազմակերպությունների անցկացրած **հետազոտության կամ մոնիտորինգի** արդյունքների հիման վրա: ՅԿ-ների **կեսից ավելին** այդ նախաձեռնությունների համար նաև **գրավոր մշակած ռազմավարություն և/կամ գործողությունների ծրագիր** է ունեցել:

ՅԿ-ների **կեսից ավելին** ՇՊ իրենց առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում **անդամակցել է որևիցե կոալիցիայի**: **Գրեթե բոլոր** ՅԿ-ները ջատագովության իրենց առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում համագործակցել են **այլ շահագրգիռ կողմերի** հետ: ՅԿ-ների **կեսից ավելին** ՇՊ իրենց առավել հաջողված նախաձեռնության շրջանակներում թիրախային լսարաններին հասնելու նպատակով օգտագործել են **վիրտուալ սոցիալական ցանցերը, ինչպես նաև հանրային հանդիպումները և թերթոնները**: ՅԿ-ների **ճնշող մեծամասնությունը** ներգրավել է **զանգվածային լրատվության միջոցներին**:

## Բաժին 3. Հարաբերություններ շահառուների, ՔՀԿ-ների և հանրության հետ

Սույն զեկույցի առաջին բաժինը, ի թիվս այլոց, քննարկում էր խնդրո առարկա ԾՊ ՀԿ-ների ջատագովության նախաձեռնություններում շահագրգիռ կողմերի (օրինակ՝ շահառուների և գործընկեր ՔՀԿ-ների) ներգրավման հարցերը: Երրորդ բաժինն անդրադառնում է շահագրգիռ կողմերի հետ ԾՊ ՀԿ-ների հարաբերությունների այլ ասպեկտներին: Օրինակ՝ որքանո՞վ են ԾՊ ՀԿ-ները շահառուներին մասնակից դարձնում իրենց կազմակերպությունների կառավարմանը կամ կարողանու՞մ են արդյոք օգտագործել այլ ՔՀԿ-ների ռեսուրսները: Միաժամանակ, Երրորդ բաժինը բացահայտում է, թե ի՞նչ միջոցներով են ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ները հարաբերվում հանրության հետ և արդյո՞ք նրանք հաշվետու են այդ հանրությանը:

### *ՀԿ-շահառուներ փոխադարձ կապ*

Հարցմանը մասնակցած 40 ՀԿ-ների շահառուները բազմազան սոցիալական խմբեր են ներկայացնում: ՀԿ պատասխանատուների փոխանցմամբ, իրենց շահառուների թվում են հասարակության խոցելի խմբեր (օրինակ՝ հաշմանդամություն ունեցողներ, սոցիալապես անապահով մարդիկ, ՄԻԱՎ-ով տառապողներ, միգրանտներ), մասնագիտական տարբեր խմբեր (օրինակ՝ լրագրողներ, դատաիրավական ոլորտի աշխատակիցներ, մանկավարժներ, գիտնականներ), տարբեր բնույթի կազմակերպություններ (օրինակ՝ ՀԿ-ներ, կրոնական կազմակերպություններ, քրեակատարողական հիմնարկներ, ՍՊԸ-ներ) և ավելի ընդհանուր սոցիալական խմբեր (օրինակ՝ քաղաքացիներ, երիտասարդներ, երեխաներ, կանայք, աղջիկներ):

Հարցմանը մասնակցած ՀԿ պատասխանատուների նշանակալի մեծամասնությունը կարծիք է հայտնել, որ իրենց կազմակերպության շահառուները գիտեն իրենց ղեկավարած կազմակերպությունների մասին: Այսպես, ՀԿ ղեկավարներից 29-ը համոզմունք է հայտնել, որ շահառուները տեղյակ են իրենց կազմակերպության գոյության մասին, իսկ 33-ը հայտարարել է, որ շահառուները տեղեկացված են իրենց կազմակերպության ծրագրերի և գործունեության մասին:

Շահառուներին տարբեր նորությունների մասին տեղեկացնելու միջոցների տեսանկյունից ՀԿ-ները գերապատվությունը տալիս են անմիջական հանդիպումներին. օրինակ՝ ՀԿ 35 պատասխանատու նշել է, որ այս միջոցը «միշտ» կամ «հաճախ» է օգտագործում իրենց շահառուներին տեղեկացնելու համար:

Տեղեկացման էլեկտրոնային միջոցները ևս ծանրակշիռ դեր են կատարում շահառուների հետ շփման համար: Տեղեկացման ավանդական միջոցները համեմատաբար սակավաթիվ ՀԿ-ներ են կիրառում: Այսպես, զանգվածային լրատվամիջոցներով հաղորդումները որպես տեղեկացման միջոց «միշտ» կամ

«հաճախ» օգտագործում է 24 ՅԿ: Միաժամանակ, իրենց շահառուներին որևէ տեղեկություն հայտնելու նպատակով 24 ՅԿ «միշտ» կամ «հաճախ» օգտագործում է ներկայացումները, շնորհանդեսները և հանրային քննարկումները (Գծապատկեր 3.1):

**Գծապատկեր 3.1. Շահառուներին տեղեկացնելու միջոցների կիրառությունը**




Շահառուների հետ անցկացված ֆոկուսխմբային քննարկումներից պարզ է դարձել, որ շահառուներն իրենց ՅԿ-ների մասին, որպես կանոն, տեղեկացել են ընտանիքի անդամների, հասարակական ակտիվություն ցուցաբերող ընկերների, ինչպես նաև հայտարարությունների միջոցով: Եղել են նաև շահառուներ, որոնք ՅԿ-ի մասին իմացել են՝ տեսնելով վերջինիս գործունեության արդյունքները սեփական համայնքում:

Ֆոկուսխմբային քննարկումների մասնակիցների հիմնական մասը նաև հայտնել է, որ հասարակական կազմակերպության շահառու է դարձել վերջինիս՝ իրավական կամ սոցիալական աջակցության որևէ խնդրով դիմելուց հետո: Երբեմն ՅԿ-ներն իրենք են բացահայտել իրենց շահառուներին (օրինակ՝ դռնեդուռ քարոզարշավի միջոցով), իսկ շահառուները մոբիլիզացվել են ՅԿ-ի իրականացրած միջոցառումների շուրջ: Երբեմն էլ, մարդիկ ՅԿ շահառու են դարձել նույն ՅԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցելու արդյունքում:

> *«Ես երկար տարիներ ուզում էի Handmade աշխատանք անեի, երազանք ունեի, բայց գիտելիք բացարձակ չունեի, չգիտեի ոնց կարելի ա կազմակերպել, հետո տղաս… զանգեցին ասեցին սենց-սենց բան կա, շատ ուրախացա, հետո էտ տրենինգներին մասնակցեցի ու շատ բան իմացա, բացարձակ ոչ մի բան չգիտեի դրա մասին ու ոգևորվեցի, ես չէի հավատում»:* (Երևանի ՖԽ)

### *Շահառուների ներգրավումը ՀԿ կառավարմանը*

Հարցված ՀԿ պատասխանատուների ճնշող մեծամասնությունը (37-ը) հայտարարել է, որ իրենց շահառուները աջակցում են կազմակերպության գործունեությանը՝ մասնակցելով միջոցառումներին: Սակայն, ՀԿ-ների ռազմավարությունների մշակման կամ ՀԿ-ների գործունեության մոնիտորինգի կտրվածքով, շահառուների մասնակցության ցուցանիշները նույնքան բարձր չեն: Օրինակ՝ հարցմանը մասնակցած ՀԿ-ների գրեթե երեք քառորդը (29-ը) ունի ռազմավարական ծրագիր: Սակայն, նման ծրագիր ունեցող ՀԿ-ների ճնշող մեծամասնության դեպքում այդ ծրագրերը մշակվում են կազմակերպության հիմնական աշխատակազմի և կազմակերպության խորհրդի անդամների մասնակցությամբ: Միայն 11 ՀԿ-ում է, որ այդ ծրագրերի մշակման գործընթացին մասնակցում են կազմակերպության շահառուները և միայն 10-ում է, որ այդ գործընթացին մասնակցում են կազմակերպության անդամները: Կամավորները ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացին մասնակցում են ՀԿ-ներից միայն 6-ում (Գծապատկեր 3.2):

Երևան և Գյումրի քաղաքներում անցկացված ֆոկուսխմբային քննարկումները ցույց են տվել, որ ՀԿ-ների շահառուները և մասամբ կամավորները թերահավատորեն են վերաբերում ՀԿ-ների ռազմավարական պլանավորման հարցերում սեփական ներդրումն ունենալու հնարավորություններին: Շահառուները և կամավորները, մասնավորապես, կարծում են, որ իրենք այդ հարցում կոմպետենտ չեն:

> *«Կոնկրետ ես, հաստատ չէի ուզենա [մասնակցել], կարող է իմ կարծիքը հակասի ու լրիվ սխալ որոշում կայացվի: Իսկ իրենք այդ կազմակերպության մարդիկ են, իրենք խորացած են... այդ գործի մեջ ու ավելի շատ գիտեն, այդ գործում մասնագետ են, ամեն մարդ իրա գործով պիտի զբաղվի, կոնկրետ ես էդ ոլորտից կարելի ա ասել գաղափար չունեմ»:* (Մարզային Ֆխ)

Ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ նաև այն համոզմունքն է հնչել, որ լավագույն դեպքում շահառուների մասնակցությունը ՀԿ-ների ռազմավարական պլանավորմանը կարող է օգտակար լինել «հավասարության գաղափարն» ընդգծելու համար: Սակայն մասնագիտական ներդրման հեռանկարն իրատեսական չէ:

> *«…Ճիշտն ասած, այն հավասարության գաղափարը, այն, որ դու մտնում ես այստեղ հավասարության գաղափարը պահպանելու համար կարելի է, բայց ինչպես ասում են, ամեն մեկը որ չի կարողանում, ամեն մեկին չէ, որ պետք է ընդգրկեն... »:* (Երևանի Ֆխ)

Ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ նաև կարծիքներ են հնչել, որ շահառուները և կամավորները վստահում են ՀԿ-ներին: Հետևաբար, վերջիններիս ռազմավարական պլանավորման աշխատանքներին մասնակցելու անհրաժեշտություն չկա:

Այնուամենայնիվ, քննարկումների մասնակիցներից ոմանք նաև ընդունել են, որ եթե ՅԿ-ները նախաձեռնություն ցուցաբերեն և ցանկություն ունեցող շահառուներին հրավիրեն պլանավորման աշխատանքներին մասնակցելու, ապա շահառուները կարող են օգտակար առաջարկներ ներկայացնել:

*«...Բայց քանի որ այդ ոլորտի մեջ չենք եղել, չգիտենք, դրա համար այս պահին ոչինչ էլ չենք կարողանա ասել, բայց եթե շարունակական լինի հավաքույթները և այլն, արդեն ինչ-որ բաներից էլ դու տեղյակ կլինես, գնաս տուն ինտերնետով նայես, դա էլ հետաքրքիր կլինի ու հաջորդ անգամ դու էլ կկարողանաս քո կողմից ինչ-որ բաներ ասել»:* (Մարզային ՖԽ)

Միաժամանակ, քննարկումների ընթացքում առաջարկ է հնչել, որ ՅԿ-ներն ավելի «բաց» լինեն և շեշտադրեն, որ պատրաստակամ են լսելու և հաշվի առնելու շահառուների և կամավորների կարծիքները:

Շահառուների ծանրակշիռ մասը թերահավատությամբ է վերաբերում նաև ՅԿ-ների գործունեությունը վերահսկելու կամ գնահատելու սեփական կարողություններին կամ իրավասությանը: Ի դեպ, ՅԿ պատասխանատուներից 19-ն է ընդունել, որ շահառուները ներգրավված են կազմակերպության գործունեության ծրագրերի գնահատմանը: Շահառուների հետ ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ կարծիքներ են հնչել, որ շահառուները ֆինանսական վերահսկողական գործունեություն և վերլուծություն իրականացնելու մեջ կոմպետենտ չեն և կարող են սխալ եզրակացություններ անել:

*«Դա անհնար է, վերահսկել հնարավոր չի: Ես հո ֆինանսական բան չեմ, որ գնամ վերահսկեմ: Մենք վերահսկող չենք»:* (Երևանի ՖԽ)

*«Երևի իրենք ավելի լավ կգիտենան ինչպես շարժվեն, քան թե իմ կարծիքը հարցնեն, այդպես եմ կարծում... որովհետև իրենք ամեն հարցում շատ գիտակ են»:* (Մարզային ՖԽ)

Բացի այդ, քննարկումների մասնակիցները պարզապես հարցականի տակ են դրել շահառուների կողմից կազմակերպության (հատկապես ֆինանսական) գործունեությունը վերահսկելու անհրաժեշտությունը: Նրանք, մասնավորապես, կարևորել են ՅԿ-ների կողմից արված գործը, որը տեսանելի է և շոշափելի: Որոշ ֆոկուս խմբերում մասնակիցները ՅԿ-ների վերահսկման մասին հարցադրմանը նույնիսկ պատասխանել են (քմ)ծիծաղով: Ոմանք էլ, լսելով նույն հարցադրումը, բարկացել են՝ դիտելով այդ հարցադրումը որպես ՅԿ-ի նկատմամբ անվստահության անհարկի դրսևորում:

*«Այսքան ծառայություն որ մատուցում են, այսքան մարդ որ գոհ են, ուրեմն իրենց ֆինանսները տեղին են օգտագործվում»:* (Մարզային ՖԽ)

Քննարկումների ժամանակ նաև տեսակետ է հնչել, որ շահառուի մասնակցությունը կազմակերպության վերահսկողությանը ճիշտ և արդյունավետ կլինի, եթե այդ նախաձեռնությունը եկած լինի կազմակերպության ղեկավարությունից կամ անձնակազմից:

> *«Եթե շահառու եմ, մի քիչ սխալ պետքա լինի, որ ասեմ, եկեք ես վերահսկեմ, ավելի շուտ կազմակերպությունը ինքը պետքա որոշի իր համար՝ լավ կլինի արդյոք որ շահառուն կողքից նայի թե չէ»:* (Մարզային ՖԽ)

Միաժամանակ, ֆոկուսխմբային քննարկումների մասնակիցներից ոմանք կարծիք են հայտնել, որ շահառուներն իրավունք ունեն և պետք է մասնակցեն կազմակերպությունների վերահսկման գործընթացներում: Նրանք այդ մասնակցությունը համարել են օգտակար և անհրաժեշտ:

> *«Եթե ինչ-որ լավ բան արվում է հասարակության համար, լավ է, որ այդ հասարակությունը տեղյակ լինի՝ ինչ է արվում»:* (Երևանի ՖԽ)

> *«Ես կարծում եմ՝ իրավունք ունեմ, քանի որ շատ ՀԿ-ներում կարող ա փողերի լվացում լինի, ու կամավորները չունեն որևէ շահ դրանից, նրանք կարող են օբյեկտիվ վերաբերվել այդ ամենին ու կարող են այնպես անել, որ հասարակական կազմակերպությունը ավելի արդար ու թափանցիկ լինի»:* (Երևանի ՖԽ)

Հայաստանում գործող դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր-սեղան քննարկման մասնակիցները համերաշխել են այն հարցում, որ հայաստանյան ՀԿ-ները պետք է ավելի լուրջ քայլեր ձեռնարկեն հանրության և շահառուների հետ կապ հաստատելու ուղղությամբ: Մասնավորապես, ՀԿ-ները պետք է զարգացնեն շահառուների հետ «խոսելու» իրենց հմտությունները: ՀԿ-ները պետք է կարողանան շահել մարդկանց վստահությունը, ինչը, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով, կստվարացնի ՀԿ-ների հետևորդների շարքերը: Հանրության հետ հաղորդակցվելիս, ՀԿ-ները նաև պետք է ամբողջությամբ կարողանան օգտագործել առցանց մեդիաների ընձեռած հնարավորությունները: Նույն կարծիքները հնչել են նաև քաղաքացիական ակտիվիստների հետ անցկացված ֆոկուսխմբային քննարկման ժամանակ:

Դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված նույն կլոր-սեղան քննարկման ժամանակ մասնակիցները նաև համաձայնել են, որ ըստ էության, դոնոր հանրությունն էլ լծակներ և գործիքներ չի կիրառում, որպեսզի ՀԿ-ները շահառուների ավելի լայն ընդգրկում ունենան: Օրինակ, դոնորների կողմից ներկայացվող հայտերի հրավերների (Request for Proposal) մեջ պահանջ չի դրվում լավագույնս խթանել շահառուների և հանրության ներգրավումը:

*Հանրային հարաբերություններ և հաշվետվողականություն*

Ինչպես և շահառուների դեպքում, լայն հանրությանը տեղեկատվություն տրամադրելիս հարցված ՀԿ-ները, որպես կանոն, օգտվում են համացանցային հարթակներից: Մասնավորապես, ՀԿ պատասխանատուներից 35-ը հայտարարել է, որ տեղեկատվություն տարածելու նպատակով իրենց կազմակերպությունները «միշտ» օգտագործում են սոցիալական ցանցերը: Երեսուներեք ՀԿ նույն նպատակով օգտագործում է համացանցային լրատվամիջոցները, 31-ը՝ կազմակերպությունների վեբկայքերը: Լրատվություն տարածելու ավանդական միջոցները, օրինակ «կենտրոնական լրատվամիջոցները», պակաս պահանջված են ՀԿ-ների կողմից (Գծապատկեր 3.3):

Իսկ ի՞նչ տեղեկատվություն են պատրաստ ՀԿ-ները տրամադրել հանրությանը, մասնավորապես՝ իրենց գրասենյակ այցելած պատահական որևէ քաղաքացու: Հարցված ՀԿ պատասխանատուների ճնշող մեծամասնությունը հայտնել է, որ նման դեպքում պատրաստ է տրամադրել կազմակերպության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ: Օրինակ՝ գրեթե բոլոր ՀԿ պատասխանատուները (37-ը) հայտնել են, որ հոժարաբար կտրամադրեն կազմակերպության գործունեության մասին տեղեկատվական հրապարակումներ: Սակայն, թվով ավելի քիչ ՀԿ պատասխանատուներ են որևէ ֆինանսական փաստաթուղթ տրամադրելու պատրաստակամություն հայտնել: Օրինակ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություն կտրամադրի 27, իսկ որևէ ծրագրի ֆինանսական հաշվետվություն՝ 26 ՀԿ պատասխանատու (Գծապատկեր 3.4):

**Գծապատկեր 3.4. Եթե որևէ քաղաքացի այցելի Ձեր գրասենյակ և հետաքրքրվի ՔՀԿ-ի գործունեությամբ, թվարկվածներից կտրամադրեք …**




Ինչ վերաբերում է հաշվետվությունները հանրայնացնելուն, հարցմանը մասնակցած ոչ բոլոր ՀԿ-ներն են մշտապես անում դա: Մասնավորապես, ՀԿ-

պատասխանատուներից 14-ն են հայտնել, որ «միշտ» ծրագրային հաշվետվություններ են հրապարակում: Ֆինանսական հաշվետվություններ «միշտ» հրապարակում են ավելի քիչ՝ 11 ՀԿ-ներ: Ֆինանսական աուդիտի հաշվետվությունները «միշտ» հրապարակող ՀԿ-ների թիվն էլ ավելի փոքր է՝ ընդամենը 6-ը: ՀԿ-ները կարծես ավելի շատ նախընտրում են հանրային հաշվետվողականություն ապահովելու պակաս ֆորմալ մեխանիզմների կիրառումը, օրինակ՝ ակտիվությունը սոցիալական ցանցերում: (Գծապատկեր 3.5):

### *Հարաբերություններ այլ ՔՀԿ-ների հետ*

Հարցմանը մասնակցած ՀԿ բոլոր պատասխանատուները հայտարարել են, որ այս կամ այն հաճախականությամբ համագործակցում են նույն ոլորտում աշխատող այլ ՔՀԿ-ների հետ: Այն հարցին, թե որո՞նք են ՔՀԿ-ների միջև արդյունավետ համագործակցության գործոնները, ՀԿ պատասխանատուների մեծամասնությունը համերաշխել է երեք գործոնների շուրջ: Մասնավորապես, «ընդհանուր գաղափարի գոյությունն» արդյունավետ համագործակցության գործոն է համարել ՀԿ պատասխանատուներից 26-ը, «փորձի փոխանակումը»՝ 25-ը, և «ռեսուրսների արդյունավետ օգտագործումը»՝ 21-ը:

Խորքային հարցազրույցներին մասնակցած ՀԿ պատասխանատուները ևս այլ ՀԿ-ների հետ համագործակցության մասին խոսելիս նշել են միմյանց ռեսուրսների համատեղ օգտագործման, ինչպես նաև փորձի և տեղեկատվության փոխանակման իրողությունները:

> *«Երբ որ մասնակցային մոնիտորինգներ ենք անում, մենք ներգրավում ենք մեր բոլոր գործընկեր ՀԿ-ներին, եթե դա անում ենք մեր մարզի տարածքում, բնականաբար, մարզում գործող ՀԿ-ին: Ընդհանրապես, երբ որ խոսում են ռեսուրսներ ունեք, չունեք, դուք մասնաճյուղ էլ ունեք ուրիշ քաղաքներում, ես դրա կարիքը երբեք չեմ զգացել, որովհետև բոլոր քաղաքներում մենք գործընկեր ՀԿ-ներ [ունենք], որոնց ռեսուրսները մեր ռեսուրսներն են, մենք հավասարաբար օգտագործում ենք մեկս մյուսի գրասենյակներն էլ, տեխնիկան էլ, սարքավորումն էլ և նաև մարդկային ռեսուրսները, ասենք, եթե տիկին Անահիտը Սևանում ունի ծրագիր, ինքը մեր ռեսուրսներից է օգտվում, եթե ուրիշ քաղաքներում է, ուրիշ քաղաքներում եղած ռեսուրսներից է օգտվում, այդ առումով»:* (ՀԿ պատասխանատու)

Առանձին ՀԿ-ների հետ համագործակցելուց բացի, հարցմանը մասնակցած ՀԿ-ների երեք քառորդը (30-ը) անդամակցում են տեղական կամ միջազգային կոալիցիաների/ցանցերի: Ընդ որում, անդամակցող ՀԿ-ների մոտավորապես կեսը (15-ը) նման կոալիցիաների կամ ցանցերի միջոցով ջատագովության իրենց փորձառությունը գնահատել է շատ արդյունավետ (Գծապատկեր 3.6):

**Գծապատկեր 3.6. Ինչպե՞ս կգնահատեիք կոալիցիաների/ցանցերի միջոցով շահերի պաշտպանության Ձեր փորձը**




ՀԿ պատասխանատուների հետ անցկացված խորքային հարցազրույցների ընթացքում մի քանի անգամ հնչել է այն միտքը, որ հասարակական կազմակերպությունների կոալիցիաները հաջող և կենսունակ են լինում այն պարագայում, եթե նրանք ստեղծված են ներքևից՝ մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: ՀԿ պատասխանատուներն այսպիսի «բնական» կոալիցիաներին հակադրեցին վերևից ստեղծված «արհեստական» կոալիցիաները:

> *«Ցավոք, Հայաստանում ավելի շատ տարածված է դրա արհեստական ձևը, որովհետև դա նաև գալիս է դոնորի պատվերից հաճախ, և կան ձևական կոալիցիաներ... Այս կոալիցիաներում դոնորների լեզուն լավ գիտեն և նույնիսկ կոռումպացված դրամաշնորհային համակարգերին լավատեղյակ են, ես պարբերաբար իմանում եմ, որ կան կազմակերպություններ և կոալիցիաներ, որոնք մեր և մեր գործընկերների բյուջեն տասնապատիկ գերազանցող թվերին տեր են լինում, բայց հանրությունը իրենց մասին չգիտի և հանրային օգուտը շոշափելի չի:* (ՀԿ պատասխանատու)

Միաժամանակ, ՀԿ պատասխանատուների փոխանցմամբ, թեև «բնական» կոալիցիաներն ամուր գաղափարական հիմք ունեն և այդ հիմքի շնորհիվ հաղթահարում են փոքր խոչընդոտները, նրանք հաճախ ֆինանսական միջոցների սղություն են զգում:

Խորքային հարցազրույցների ընթացքում ՀԿ պատասխանատուներից ոմանք մատնանշել են Հայաստանում կոալիցիաների արդյունավետ աշխատանքը խոչընդոտող մի քանի այլ պատճառներ ևս: Օրինակ՝ արդյունավետ աշխատանքին խանգարում է կազմակերպություններից յուրաքանչյուրի առաջատար լինելու ցանկությունը: Կոալիցիաների ներսում հաճախ մրցակցություն է սկսվում ՀԿ-ների միջև: Որոշ ՀԿ-ներ կոալիցիային միանալուց որոշ ժամանակ հետո մոռանում են համագործակցության հիմնական նպատակների մասին: Երբեմն էլ չնախատեսված ֆինանսական ծախսերն են խոչընդոտ դառնում կոալիցիաների աշխատանքին:

**Այսպիսով**, ՀԿ-ների երեք քառորդը վստահ է, որ իրենց շահառուները տեղեկացված են կազմակերպությունների ծրագրերի և գործունեության մասին: ՀԿ-ներն իրենց շահառուներին տարբեր նորությունների մասին հիմնականում տեղեկացնում են **անմիջական հանդիպումների և համացանցային հաղորդակցման գործիքների** միջոցով:

ՀԿ-ներից երեք քառորդի ռազմավարական ծրագրերը մշակվում են կազմակերպության հիմնական աշխատակազմի և կազմակերպության խորհրդի անդամների մասնակցությամբ: **Շահառուների, անդամների և կամավորների մասնակցությունը ռազմավարական ծրագրերի մշակմանը նշանակալի չէ**: Նշանակալի չէ նաև շահառուների, անդամների և կամավորների ներգրավումը ՀԿ-ների գործունեության մոնիտորինգի աշխատանքներին:

ՀԿ-ները **պատրաստակամ չեն հանրայնացնել իրենց ֆինանսական հաշվետվությունները**: ՀԿ-ների միայն մեկ քառորդն է, որ մշտապես գրավոր հաշվետվություններ է հրապարակում: ՀԿ-ների ճնշող մեծամասնությունն իր աշխատանքների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը գերադասում է ապահովել **վիրտուալ սոցիալական ցանցերում**: Տեղեկատվություն տարածելու համար ՀԿ-ներն առավելապես նախընտրում են **համացանցային հարթակները**:

Բոլոր ՀԿ-ներն այս կամ այն հաճախականությամբ համագործակցում են նույն ոլորտում աշխատող այլ ՔՀԿ-ների հետ: **ՀԿ-ների երեք քառորդը նաև անդամակցում է տեղական կամ միջազգային կոալիցիաների/ցանցերի**: ՀԿ-ների կոալիցիաները կենսունակ են լինում այն դեպքերում, երբ ստեղծվում են «ներքևից»՝ ամուր գաղափարական հենքի վրա:

# Բաժին 4. Հանրային վստահությունը ՀԿ ոլորտի հանդեպ

Անվիճելի է, որ հատկապես ջատագովությամբ զբաղվող ՀԿ-ներն իրենց նախաձեռնություններն արդյունավետությամբ պսակելու համար շահառուների, որոշում կայացնողների և, ընդհանրապես, հասարակության վստահության կարիքն ունեն: Միայն վստահության առկայության պարագայում է, որ ՀԿ-ները կարող են աջակցություն ստանալ նշված խմբերի կողմից: Վստահու՞մ են արդյոք հայաստանցիները ՀԿ-ներին և համագործակցու՞մ են նրանք ՀԿ-ների հետ: Զեկույցի այս բաժինը բացահայտում է ՀՀ քաղաքացիների՝ ՀԿ ոլորտի նկատմամբ վստահության ցածր ցուցանիշները և մատնանշում այդ ցածր ցուցանիշների հնարավոր պատճառները:

### *Հանրային վստահության ցուցանիշը*

«ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում իրականացված համապետական հարցման (1443 տնային տնտեսություններում) արդյունքների համաձայն, Հայաստանի բնակչության վստահությունը ՀԿ ոլորտի նկատմամբ չափազանց ցածր է: Մասնավորապես, հարցվածների ընդամենը 6.7 տոկոսն է հայտարարել, թե ՀԿ ներկայացուցիչներին վստահում է «շատ» կամ «լիովին» (Գծապատկեր 4.1): Ընդ որում, ՀԿ ներկայացուցիչներին վստահողները Երևանում ավելի քիչ են (4.1 տոկոս), քան ՀՀ այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում (Աղյուսակ 4.1):

**Գծապատկեր 4.1. Որքանո՞վ եք վստահում հասարակական կազմակերպություն-ների ներկայացուցիչներին** (տոկոս ամբողջի մեջ)




Զարմանալի չէ, որ նման ցածր վստահության համատեքստում, հարցված հայաստանցիների անդամակցությունը կամ մասնակցությունը ՀԿ-ների գործունեությանը չնչին է: Այսպես, հարցվածների ընդամենը 1.6 տոկոսն է հարցման պահին հանդիսացել որևէ ՀԿ-ի, համայնքային կազմակերպության կամ

ասոցիացիաների անդամ: Հարցվածների ընդամենը 1.8 տոկոսն է հայտարարել, որ հարցմանը նախորդած 6 ամիսների ընթացքում մասնակցել է ՀԿ-ների կազմակերպած խնդիրների քննարկման կամ այլ հանդիպումների: Հարցված հայաստանցիների 0.7 տոկոսն է հարցմանը նախորդած 6 ամիսների ընթացքում դիմել որևէ ՀԿ ներկայացուցչի՝ անձնական և/կամ համայնքային խնդիրներով:

### *Անվստահության պատճառները*

Որո՞նք կարող են լինել հայաստանյան ՀԿ-ների հանդեպ հանրային անվստահության պատճառները: Ընդհանրապես, հաստատությունների հանդեպ հանրային վստահության (ինստիտուցիոնալ վստահություն) վերաբերյալ եղած ուսումնասիրությունների համաձայն, մարդիկ վստահում են որևէ հաստատության, եթե վերջինս թափանցիկ, հաշվետու, արհեստավարժ, հոգատար (հանրային շահի համար հոգ տանող) և կանխատեսելի հաստատության տպավորություն է թողնում: Արդյո՞ք հայաստանյան ՀԿ-ներն ունեն նման համբավ հանրության աչքում:

«ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում անցկացված հարցումը թույլ է տալիս որոշ լույս սփռել այս հարցի վրա: Մասնավորապես, հայաստանցիների միայն 4.2 տոկոսն է ՀԿ-ների **հաշվետվողականության** մակարդակը «բարձր» կամ «շատ բարձր» գնահատում (Գծապատկեր 4.2): Հարցվածների միայն 6.7 տոկոսն է «բարձր» կամ «շատ բարձր» գնահատում ՀԿ-ների աշխատանքի **թափանցիկության** մակարդակը[4] (Գծապատկեր 4.3):

Հարցված հայաստանցիների փոքր տոկոսն է գոհ ՀԿ-ների **հոգատարությունից**: Այսպես, հարցվածների 83.6 տոկոսի համոզմամբ, «կարևոր» կամ «շատ կարևոր» է, որ ՀԿ ներկայացուցիչները հաշվի առնեն մարդկանց կարծիքը (Գծապատկեր 4.4): Սակայն, հարցվածների միայն 17.1 տոկոսն է համոզված, որ ՀԿ-ների ներկայացուցիչները մշտապես կամ հաճախ են լսում մարդկանց կարծիքը: Հարցված հայաստանցիների փոքր մասն է նաև գտնում, որ ՀԿ-ները լիարժեքորեն են ներկայացնում հասարակության մի շարք խոցելի խմբերի շահերը: Այսպես, հարցվածների 5.2 տոկոսն է կարծիք հայտնել, որ ՀԿ-ները հաշմանդամություն ունեցող մարդկանց շահերը «շատ» կամ «լիովին» են ներկայացնում: Հարցվածների 3.6 և 4.3 տոկոսն է կարծիք հայտնել, որ ՀԿ-ները «շատ» կամ «լիովին» ներկայացնում են համապատասխանաբար աղքատների և փախստականների շահերը (Գծապատկեր 4.5):

---

[4] ՀԿ-ների հաշվետվողականությունը բարձր գնահատածների բաժինը ևս Երևանում ավելի փոքր է (2.1 տոկոս), քան այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում (Աղյուսակ 4.2): Ինչպես և հաշվետվողականության դեպքում, ՀԿ-ների գործունեության թափանցիկության հանդեպ քննադատաբար տրամադրվածների բաժինը Երևանում ավելի բարձր է, քան այլ բնակավայրերում (Աղյուսակ 4.3):

**Գծապատկեր 4.5. Որքանո՞վ են հասարակական կազմակերպությունները ներկայացնում հետևյալ խմբերի շահերը** (տոկոս ամբողջի մեջ)




Հարցված հայաստանցիների ընկալումներում, կարելի է ենթադրել, ցածր է նաև ՀԿ-ների **արդյունավետության** (փոփոխություն առաջացնելու կարողության) մակարդակը: Այսպես հարցվածների մեկ հինգերորդն է (19.8 տոկոսը) կարծում, թե ՀԿ-ներն ինչ-որ ձևով ազդում են համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա: Կրկնակի ավելի  է (42.5 տոկոս) այն հարցվածների բաժինը, ովքեր գտնում են, որ ՀԿ-ները ավագանու վրա ազդեցություն «ամենևին» չունեն, կամ այդ ազդեցությունը «շատ քիչ» է (Գծապատկեր 4.6):

Ձատագովությամբ զբաղվող ՀԿ-ների որակական ուսումնասիրությունը, մասնավորապես՝ ֆոկուս-խմբերը և կլոր-սեղան քննարկումները ևս արծարծել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հանդեպ հասարակության անվստահության պատճառները:

Այդ պատճառներից մեկն, ըստ փորձագետների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, վերաբերում է **թափանցիկությանը**: Մասնավորապես, մարդիկ ծանոթ չեն ՀԿ-ների գործունեությանը: Ծանոթ չլինելու պատճառներից մեկը նաև ՀԿ-ների ոչ բավարար ակտիվությունն է իրենց գործունեության մասին տեղեկատվություն տարածելու և հանրությանն ավելի հասանելի դառնալու ուղղությամբ: Օրինակ՝ կարծիքներ են հնչել, որ ՀԿ-ները պետք է ավելի շատ տեսանելի լինեն հեռուստատեսությամբ և ռադիոյով, ինչպես նաև ավելացնեն հանրային միջոցառումների թիվը:

*«Մարդիկ չգիտեն ՀԿ-ներին.... Եթե մեխանիզմներ մշակեն, որ իրենք ավելի շատ երևան, ...ինչ-որ կերպ հասանելի դառնան, իրենց մասին*

*իմանալը խթանեն, բնակիչն էլ կկարողանա որոշել, վստահելի ՀԿ է, թե…: Բայց քանի որ չգիտեն՝ ինչ իմանան վստահելի է, թե չէ»:* (Մարզային ՖԽ)

ՀԿ գործունեությունն ի ցույց դնելու անհրաժեշտությունը կարևոր է նաև մեկ այլ տեսանկյունից: Քաղաքացիական ակտիվիստների հետ անցկացված կլոր-սեղան քննարկման ժամանակ կարծիք է հնչել, որ ՀԿ-ները բաժանվում են երեք հիմնական մասի՝ «գռնգռներ», «բիզնես անող» ՀԿ-ներ և «գործ անող» ՀԿ-ներ: Այս երեք խմբերի գոյությունը հաճախ շփոթ է առաջացնում հասարակության մեջ, և փաստորեն առաջին երկու խմբերը ստվերում են երրորդ՝ «գործ անող» ՀԿ-ներին: Նույն կարծիքն է հնչել նաև շահառուների հետ անցկացված ֆոկուսխմբային քննարկումներից մեկի ժամանակ:

*«…Կան լավ կազմակերպություններ: Էնքան վատը առաջ եկել, որ նրանք [լավերը] արդեն էդ հարվածի տակ են»:* (Երևանյան ՖԽ)

Ընդ որում, շահառուների հետ անցկացված ֆոկուս-խմբերում կարծիքներ են հնչել, թե կարևոր է ոչ միայն կոնկրետ ՀԿ-ների մասին տեղեկատվությունը, այլև ընդհանրապես հասարակական կազմակերպություն երևույթի մասին իրազեկվածությունը (օրինակ՝ ի՞նչ է հասարակական կազմակերպությունը, ի՞նչ նպատակով է ստեղծվում, ինչպե՞ս է գործում և այլն):

Որակական հետազոտության արդյունքները ևս ցույց են տալիս, որ ՀԿ-ների աշխատանքի **հաշվետվողականությունը** հասարակական վստահության կարևոր աղբյուր է: Մասնավորապես, քաղաքացիական ակտիվիստների հետ քննարկման ժամանակ կարծիք է հնչել, որ ՀԿ-ները պետք է կարողանան հասարակության հետ հետադարձ կապի ավելի գործուն մեխանիզմներ մշակել: Դոնոր կազմակերպության ներկայացուցիչները նույնպես շեշտել են ՀԿ-ների հանրային հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու կարիքը: Մասնավորապես առաջարկվել է, որ ՔՀԿ-ները այնպիսի մեխանիզմներ կիրառեն, որոնք հնարավորություն տան հանրության տարբեր խմբերին ծանոթանալ կազմակերպությունների տարեկան կամ որևէ այլ պարբերականությամբ հանրայնացվող հաշվետվություններին: Աշխատանքի թափանցիկությունը կարևորվել է նաև շահառուների հետ անցկացված ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ:

*«Հայաստանում, չեմ ուզում էդ բառը օգտագործել, մի քիչ լավ չի հնչում, որ կողմ շուռ ես գալիս, հիմնադրամի ես հանդիպում, բազմանում են, և էդ հիմնադրամները գումարներ են ունենում եկամտի աղբյուրներ են ունենում, որոնք ուր են գնում, ինչ են անում, ոչ մի հսկողություն չկա, հաշվետվություն չկա: Դրանց հաշվետվությունը պետք է մասսայական լրատվության միջոցներով ներկայացվի ժողովրդին, եթե դրանք էդքան բազմանում են»:* (Երևանի ՖԽ)

Հարկ է հավելել, որ ըստ որակական հետազոտության արդյունքների, ՀԿ-ների հանդեպ գոյություն ունեցող հանրային անվստահությունն էլ ավելի է խորանում, երբ

նրանց նկատմամբ գիտակցաբար բացասական քարոզ է իրականացվում: Մասնավորապես, քաղաքացիական հասարակության ոլորտի փորձագետները համերաշխ են եղել այն հարցում, որ ԶԼՄ-ներով և պաշտոնական հանրային դիսկուրսի որոշ սեգմենտների միջոցով հաճախ տիրաժավորվում են հասարակական կազմակերպություններին փակցվող «գրանտակեր» կամ «պետության համար վնասակար գործունեություն ծավալող կազմակերպություն» պիտակները: Փորձագետները նաև կարծիք են հնչեցրել, որ ՀԿ-ները պետք է հետամուտ լինեն նման պիտակումներին համարժեք պատասխան տալուն:

**Այսպիսով**, հարցված հայաստանցիների **փոքր մասն է լիարժեքորեն վստահում ՀԿ-ների ներկայացուցիչներին**: Վստահության ցածր ցուցանիշների պատճառ կարող է հանդիսանալ այն իրողությունը, **որ հարցվածները ցածր են գնահատում ՀԿ-ների աշխատանքի թափանցիկության, հաշվետվողականության և արհեստավարժության մակարդակը**: Ընդ որում, Երևանում ՀԿ-ների ներկայացուցիչներին վստահողների բաժինն ավելի փոքր է, քան ՀՀ այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում: Երևանում, այլ քաղաքների և գյուղական բնակավայրերի համեմատ, ավելի ընդգծված է քննադատական մոտեցումը ՀԿ-ների հաշվետվողականության և գործունեության թափանցիկության հանդեպ:

Ըստ որակական հետազոտության արդյունքների, ՀԿ-ների նկատմամբ հանրային վստահության պակասը պայմանավորված է բնակչության՝ ՀԿ-ների մասին **ցածր իրազեկվածության, ՀԿ-ների հաշվետվողականության և թափանցիկության ցածր մակարդակի**, ինչպես նաև ՀԿ-ների հանդեպ իրականացվող **հակաքարոզի** գործոններով:

# Հավելված 1. Գծապատկերներ և աղյուսակներ

## Բաժին 1

**Գծապատկեր 1.1. Ձեր կազմակերպության փորձից ելնելով, ասացեք, խնդրեմ, թե ո՞ր մակարդակում է առավել արդյունավետ շահերի պաշտպանությունը** (մի քանի պատասխան)



**Գծապատկեր 1.2. Ի՞նչ քայլեր եք ձեռնարկել շահերի պաշտպանության Ձեր նախաձեռնությունների իրականացման ընթացքում** (մի քանի պատասխան)



**Գծապատկեր 1.3. Ո՞վ է մասնակցում (այս կամ այն կերպ) շահերի պաշտպանության Ձեր նախաձեռնություններին** (մի քանի պատասխան)




**Գծապատկեր 1.4. Ովքե՞ր են մասնակցում Ձեր հետազոտական/ մոնիտորինգային գործողություններին** (մի քանի պատասխան)



